Հանրայինի հաղորդավարը, փաստացի, երեք քաղաքական ուժի մեղադրում է Ռուսաստանի հետ կապ ունենալու, Ռուսաստանից ուղարկված լինելու եւ կառավարվելու մեջ, մեղադրում է, որ Ռուսաստանն է Հայաստանում հանրային համախմբում կազմակերպում՝ ընդդեմ գործող իշխանության: Եվ այս պնդումներն արվում են առանց որեւէ ապացույցի:

Կարդացեք՝ էջ 5

Ի՞նչ զիջումների է գնացել Ռուսաստանը գրեթե 4 տարվա պատերազմի ընթացքում: Դա ագրեսորն է՝ եթե մոռացել եք: Ես հասկանում եմ, որ միջազգային հակամարտությունների լուծման պրակտիկայում կա ավելի թույլ կողմի վրա ճնշում գործադրելու ավանդույթ: Թրամփը ցանկանում է աստղանիշ տալ եւս մեկ «ավարտված պատերազմի» համար:

Կարդացեք՝ էջ 6



Քնում է ու տհաճ երազ է տեսնում. հեղեղը խուժում է ներս: Սեղանակիցներն անհետանում են՝ ինչպես իր խոստումները: Մնում է մենակ: Դուրս է նայում: Ոչ ոք: Ո՛չ Անանա կա, ո՛չ թիկնազորը, ո՛չ ՔՊ-ն: Հասկանում է: Չեն ընտրել: Խուճապ: Թաքնվել: Թախտի տա՞կ՝ վտանգավոր է: Կգտնեն: Փողոցից ագրեսիվ ձայներ են գալիս. ո՞ւր է:

Կարդացեք՝ էջ 8

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 24 (4159), 21 փետրվար, շաբաթ, 2026

Հրապարակ

www.hraparak.am

Իշխանություններն այնքան հպարտանալու բան չունեն, որ անթաքույց սկսել են հպարտանալ նախկինների ստեղծածով՝ հույս ունենալով, որ իրենց էլեկտորատը կարող է չհիշել, թե դա ում ժամանակ է ստեղծվել: Խոսքը պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի մասին է: Նա նախօրեին տեսանյութ էր հրապարակել Դիլիջանում գործող Մոնթե Մելքոնյանի անվան ռազմամարզական վարժարանի մասին: «Ձեզ եմ ներկայացնում պաշտպանության նախարարության ընձեռած հերթական հնարավորությունները եւ մեր կատարած փոփոխությունների արդյունքները»,- գրել է Պապիկյանը՝ տեսանյութին կից, որում պատմում է, թե ինչ հնարավորություններ է վարժարանն ընձեռում բարձր դասարանի աշակերտներին, եւ ինչ ծրագրեր են իրենք իրականացնում: Սակայն խնդիրն այն է, որ այդ վարժարանը ոչ թե ներկայիս իշխանություններն են կառուցել, այլ դա հիմնադրվել է 2017 թվականին՝ Սերժ Սարգսյանի ժամանակ: Ընդ որում՝ Երեւանում գործող վարժարանի մասնաճյուղը ժամանակին, երբ Դիլիջանում էին վերաբացում, ընդդիմադիրները եւ հատկապես Փաշինյանը քննադատում էին, թե պետությունն ավելորդ ծախս է անում: Ի դեպ, այս վարժարանում սովորող աշակերտները հետագայում ընդունվում են ռազմական ինստիտուտներ:

Պետական ապարատում պարգեւավճարներ ստացած ղեկավար անձնակազմը, պարզվում է, պարտադիր պետք է ինքնակրթությամբ զբաղվի, հակառակ դեպքում կզրկվի պարգեւավճարի 10 տոկոսից: Առավելագույնը 250 հազար դրամ պարգեւավճար ստացող բարձրաստիճան պաշտոնյաները պետք է ծախսեն տարբեր վճարովի դասընթացների հաճախելու վրա, ապա այդ մասին փաստաթղթեր ներկայացնեն, ոչ չզրկվեն այդ 250 հազար դրամից: Կառավարության համապատասխան որոշման մեջ բառացի գրված է. «Խրախուսանքի արժանացած անձին տրված պարգեւավճարի 10 տոկոսը, իսկ վերջինիս մեծությունը 250 հազար դրամը գերազանցելու դեպքում՝ 250 հազար դրամը, նախատեսված է վճարման կիսամյակին հաջորդող կիսամյակի ընթացքում կրթության կամ գիտական գործունեության հետ կապված, այդ թվում՝ միջազգային հեղինակավոր գիտական պարբերականներում հրապարակումների նպատակով ծախսերի համար»: Բացի այդ՝ կրթական ծախսերի վերաբերյալ գրավոր ապացույցներ չներկայացնելու պարագայում «այդ մասը ենթակա է նվազեցման հաջորդող ժամանակահատվածի խրախուսման ֆոնդից»:

Հաե փոքրիկ հաղթանակը

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, հավանաբար, հետեւում է չին հայտնի փիլիսոփայի խորհրդին. «Եթե դու ինչ-որ մեկին ուժեղ ատում ես, հանգստացիր, նստիր գետի ափին եւ սպասիր՝ ջուրը թշնամուդ դին կբերի»: Ոմանք, իհարկե, համաձայն չեն այն մարտավարության հետ, որը որդեգրել է Վեհափառը, եւ որով առաջնորդվում է Հայ առաքելական եկեղեցին, ու կարծում են, որ Մայր Աթոռը պետք է կտրուկ գործողությունների դիմի, պայքարող լինի, թույլ չտա, որ իր զավակներին կալանավորեն ու խոշտանգեն: Բայց պարզ է, որ պետության, նրա ուժայինների, նրա լծակների դեմ միայն արդարությամբ, Աստծո զորությամբ եւ համբերատարությամբ չես կարող պայքարել: Մանավանդ՝ երբ իշխանությունն այդ պետական լծակները կիրառելու հարցում ո՛չ կոմպլեքսներ ունի, ո՛չ օրենքը պահելու խնդիր եւ օտար զավթիչի նման է վերաբերվում սեփական Եկեղեցուն ու նրա սպասավորներին: Գուցե հիստերիկ ու անօրեն իշխանության դեմ պայքարելու ոչ պակաս արդյունավետ միջոց է «գետի ափին նստելն ու ջրի բերած դիակին սպասելը», ինչը եւ անում են Մայր Աթոռն ու նրա առաջնորդը: Ընդ որում, արդեն փոքրիկ, բայց հաստատուն հաջողություններ ունեն իրենց սպասումի մեջ: Չնայած բոլոր խոչընդոտներին, ապօրինություններին եւ իշխանության սահմռկեցուցիչ անամոթությանը, որով փորձեցին կանխել Եպիսկոպոսաց ժողովը, այն կայացավ եւ բավականին կոշտ հայտարարությամբ հանդես եկավ: Չնայած իշխանական բոլոր լծակների, ճնշումների կիրառմանը, գայթակղություններին, ադմինիստրատիվ ռեսուրսի օգտագործմանը, 7-8 ամիս տեւող հակաեկեղեցական պայքարը զրո արդյունք է գրանցել եւ փակուղի մտցրել նենգ ծրագրի հեղինակներին: Եվ, վերջապես, անասելի ճնշումների պայմաններում Եկեղեցուց պոկված 10 տիրադավ եպիսկոպոսներից մեկը դարձի եկավ ու վերադարձավ կանոնական ուղի:

ՔՊ նախընտրական ընտրություններից հետո որոշ պատգամավորների մոտ խուճապային տրամադրություններ են առաջացել, խոսքը նրանց մասին է, ովքեր դուրս են մնացել ցուցակի անցողիկ տեղերից եւ տեղ չեն ունենա հաջորդ խորհրդարանում: Բանն այն է, որ այս պատգամավորների մեծ մասը հիպոթեքային վարկով տներ են գնել՝ կարծելով, թե ամբողջ կյանքում պատգամավոր են աշխատելու եւ հարկատուներիս հաշվին միլիոնավոր պարգեւավճարներ ստանալով՝ շքեղ կյանքով են ապրելու: Հիմա մտավախություն ունեն, որ ոչ միայն պատգամավորի, այլեւ մի որեւէ պետական աշխատանք էլ իրենց չի տա Նիկոլ Փաշինյանը, եւ իրենք կհայտնվեն այնտեղ, որտեղ էին մինչեւ 2018 թվականը. ամեն դրամ հաշվելով՝ կսկսեն մի կերպ գոյատեւել: Ուստի շատերի մոտ սգո տրամադրություններ են՝ ինչպես են փակելու վարկերը, ինչպես են «տուն պահելու»:

ԽՈՏՈՐՅԱԼՆԵՐԻՑ ՄԵԿԸ ԴԱՐՁԻ ԵԿԱՎ, ՄՆԱՑԻՆ 8-Ը

Փաշինյանին միացած տիրադավներից Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը նախ մասնակցեց, ապա ստորագրեց Եպիսկոպոսաց ժողովի ամփոփիչ հայտարարությունը, որով իրենց հավատարմությունն էին հայտնում կաթողիկոսին: Հիշեցնենք, որ Ավստրիայի Սանկտ Փյոլթեն քաղաքում հավաքից հետո ՀԱԵ 25 եպիսկոպոսներ հայտարարությամբ խոր մտահոգություն հայտնեցին եկեղեցի-պետություն հարաբերությունների առնչությամբ, կոչ արեցին ՀՀ իշխանություններին՝ «դադարեցնել Եկեղեցու հանդեպ հալածանքները եւ հարգել Եկեղեցու՝ դարերով ամրագրված ինքնիշխանությունն ու ինքնավարությունը, վերջ դնել շինծու մեղադրանքներով ու զրպարտություններով եկեղեցականների ու ազգընտիր Ամենայն Հայոց Հայրապետի նկատմամբ բռնաճնշումներին», ազատ արձակել կալանավորված եկեղեցականներին: Մեր տեղեկություններով՝ Հովնան սրբազանին դարձի են բերել ամերիկահայ մեծահարուստները, համայնքի ազդեցիկ անդամները, որոնք նրան պարտադրել են հետ կանգնել տիրադավության ուղուց՝ զգուշացնելով, որ կարող են նախաձեռնել թեմի առաջնորդի փոփոխություն, ընտրության առաջ են կանգնեցրել նրան, եւ նա, քանի որ պակաս չափով է կախման մեջ Նիկոլ Փաշինյանից, «դարձ ի շրջանս» է արել: Եպիսկոպոսները նաեւ հորդորել են «խոտորյալ ութ սրբազաններին՝ գործել Սուրբ Էջմիածնի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդեպ հավատարմության ուխտի եւ ծառայական կոչման գիտակցությամբ» եւ խնդիրներն արծարծել ու լուծել բացառապես ներեկեղեցական ատյաններում: Ինչու ութ, քանի որ Մասյացոտնի թեմի նախկին առաջնորդ Գեւորգ եպիսկոպոսն արդեն կարգալույծ է արվել:

ԹԵ ԻՆՉՊԵՍ Է ՔՊ-Ն ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏՐԱՆՔ ՍՏԵՂԾՈՒՄ

ՔՊ-ական կառավարությունը վերջին ամիսներին փող է, որ տալիս է համայնքներին:

Ինչքան կիսատ-պռատ մնացած ծրագրեր կան, հիշել են ու ակտիվորեն ֆինանսավորում են՝ լավ հասկանալով, թե ոնց են հեռավոր մարզերի բնակիչներն ուրախանալու, գնահատելու կառավարության ջանքերն ու քվեաթերթիկում մեծ ու յուղոտ «ծիտիկ» դնելու ՔՊ-ի տողում:

Նկատենք, որ վերջերս կառավարության ոչ մի նիստ չի անցնում առանց գյուղերում սուբվենցիոն

ծրագրերի համար փողեր հատկացնելու: Միանգամից 3 տարվա սուբվենցիոն ծրագրերի համաֆինանսավորման նպատակով, վերջին իր նիստում կառավարությունը որոշեց 948 մլն 541 հազար դրամ հատկացնել, որը վերաբերում է 16 համայնքների 18 ծրագրերին: Ընդ որում, գումարը տրվում է մարզերի բնակիչների առաջնահերթ խնդիրների համար՝ ասֆալտ, ջրագիծ, ճանապարհ: Թե ինչ որակի աշխատանքներ են կատարվում, դա այլ հարց է: Բայց այս պահին մարդիկ հույս ունեն փրկվել ցեխից, կեղտից, ունենալ ջուր, ճամփա:

Մանկապարտեզ է լինելու Մեծամոր համայնքի Շենավան գյուղում՝ 80 երեխայի համար նախատեսված: 21 թվականի արտահերթ ընտրություններից առաջ էլ այստեղ աշխատանքներ արեցին՝ առուները մաքրեցին ցեխից: Առհասարակ, ցեխից մարդկանց փրկելը շնորհակալ ու շահավետ գործ է՝ թանկ չէ, բայց անմիջապես գյուղացու օրհնությանն ես արժանանում, որովհետեւ կյանքը ցեխերում անտանելի է: Անգամ մայրաքաղաքի ու երեւանամերձ վայրերի բնակիչներն այս գարնանը համոզվեցին դրանում, էլ ուր մնաց՝ հեռավոր գյուղերի: Այս ընտրություններից առաջ ցեխից փրկվելու են Ապարանը՝ ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման շնորհիվ, Արմավիրի Արաքս գյուղը, որտեղ փողոց են սալիկապատում: Մարդիկ այստեղ վերջապես ձեւավորված մայթեզրեր կտեսնեն:

Արաքսի վարչական ղեկավարի գրասենյակից մեզ հայտնեցին, որ մայթեզրերը, այսպես կոչված՝ «բորդյուրը», կառուցվել է Ռաֆֆու փողոցում, որը տանում է դեպի դպրոց ու մանկապարտեզ: Սեւակի փողոցը՝ ցեխի մեջ կորած, հետո են ասֆալտապատելու, դեռ չեն սկսել, Նժդեհի փողոցում էլ աշխատանքը սկսել են Նոր տարուց հետո, հիմա ավարտելու են:

Առհասարակ, «ասֆալտ»-ն ամենակրկնվող բառն է ծրագրերում, լավագույն նախընտրական «ապրանքը». Արզնիի 5-րդ, 6-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ փողոցներում՝ ասֆալտ, Մալիշկայում՝ ասֆալտ, Նոյեմբերյանում՝ սալապատում տուֆով, Դիլիջանի Գետափնյա փողոցում՝ ասֆալտ, Ջրվեժում՝ վերջապես ասֆալտ, մի քիչ ասֆալտ՝ Սպիտակում: Մի մարզադաշտ՝ Ճոճկանում, Կոտայքի Ակունք գյուղում էլ կոյուղու ցանց կլինի: Գառնի, Գեղարդ, Գողթ գյուղերում նոր ջրագծեր կանցկացնեն, Սիսիանի Աղիտու եւ Վաղատին, Աղվանի բնակավայրերի խմելու ջրագծերը կթարմացնեն, Տեղում, Կոռնիձոր եւ Վաղատուր բնակավայրերում խաղահրապարակներ եւ ժամանցի կենտրոններ կսարքեն, Քաջարանում շենք են նորոգում, Գորիսում՝ փողոց, ֆուտբոլի դաշտ, Եղեգնաձորում գերեզմանոց են սարքում: Սա արդեն երրորդ գերեզմանոցն է լինելու Եղեգնաձորում: «Արդեն ավարտել են կառուցումը: Մենք ունեինք գերեզմանոցի խնդիր, մեկը փակ էր, մյուսը՝ կիսափակ»,- ասացին մեզ համայնքապետարանից:

Հաշվարկը պարզ է՝ հանուն այդ ամենի, գուցե աչք փակեն երկրում տեղի ունեցող անարդարությունների, թալանի, Եկեղեցու ու եկեղեցականների, ազգային արժեքների դեմ ոտնձգությունների վրա եւ քվեարկեն ՔՊ-ի օգտին: Ըստ էության, սա նախընտրական կաշառք է, որը բաժանում են ընտրողին:

Վերջին նիստում կառավարությունը հիշել է նաեւ սահմանամերձ համայնքների բնակիչներին: Նրանց կենսապայմանների բարելավման նպատակով 82 բնակավայրի աջակցություն է տրամադրելու: 2026 թվականի ՀՀ պետական բյուջեով՝ որպես աջակցություն սահմանամերձ համայնքներին, հատկացվել է 1 մլրդ դրամից ավելի: «Վերոնշյալ գումարը տրամադրվում է ՀՀ Արարատի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի եւ Տավուշի մարզերի 13 սահմանամերձ համայնքների 82 բնակավայրերի բնակիչներին՝ բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի սակագնի մասնակի եւ անշարժ գույքի հարկի փոխհատուցման նպատակով»: Մի որոշում էլ ընդունեցին կարկուտից տուժածների համար: Ընդ որում՝ կարկուտները տեղացել են 2024 եւ 2025 թվականներին, բայց հողօգտագործողներին պատճառված վնասները փոխհատուցում են հիմա՝ ԱԺ ընտրություններից երեք ամիս առաջ: Խոսքն Արմավիրի մարզի Մեծամոր, Արմավիր, Բաղրամյան, Արագածոտնի Աշտարակ եւ Լոռու մարզի Գյուլագարակ համայնքների՝ կարկտահարության հետեւանքով կրած վնասների մասին է, որոնց ամբողջական փոխհատուցման համար մոտ 1 մլրդ է հատկացվում:

«Նախ, բյուջեից բացի, կառավարությունն ունի միջնաժամկետ ծրագրային ծախսեր, որոնք 3 տարվա կտրվածքով են: Դրանք պարբերաբար թարմացվում են: Վարկեր կան, որոնք ենթակառուցվածքների համար են տրվել, եւ որոնց տրամադրման համար կա պարտադիր պահանջ՝ որ որոշակի տոկոսը, բացի բյուջեի ծախսերից, որոնք պարբերաբար թարմացվում են: Կան վարկեր, որոնք ուղղվում են ենթակառուցվածքներին, էսինչ միջազգային վարկը ստացվում է, բայց պարտադիր պահանջ կա, որ համաֆինանսավորում լինի որոշակի տոկոսով: Հավանաբար, 3 տարվա ընթացքում՝ 2022-2025 թվականների համաֆինանսավորման գումարներն են»,- ասում է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար, պատգամավոր **Տիգրան Աբրահամյանը**, որը մինչեւ իշխանափոխությունը 3 տարի ղեկավարել է ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության եւ վերլուծության կենտրոնը: Նրան հարցրինք, թե ինչպես է, որ միանգամից այսքան գումար են տալիս համայնքներին, սա ինչ է՝ ուզում են լավ կառավարման պատրանք ստեղծել: «Դրա համար էլ պարտքը 8 տարվա ընթացքում դարձել է 8,5 մլրդ դրամ: 27 տարում 5,5 մլրդ պարտք են վերցրել, իսկ նա 8 տարում 8,5 մլրդ է վերցրել: Լրացուցիչ փողեր են բաժանում, որը թաքնված կաշառք է, էլի»: Բայց մյուս կողմից էլ սարքում են, չէ՞: «Հա, սարքում են: Օրինակ, եկել են, մեր փողոցն անցյալ տարի սալիկապատել են, բայց որ մեկին ասեմ՝ սա անցյալ տարի է արվել, չի հավատա, կասի՝ սա 20 տարվա արված է: Այստեղ սարքում են՝ հետեւից քանդվում է»,- նշում է պատգամավորը:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

99.95 ՏՈԿՈՍՈՎ՝ ՔՊ-Ն ԻՄ ԱՌԱՋԻՆ ԵՎ ՎԵՐՋԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԼԻՆԻ

ՔՊ-ական պատգամավոր **Ալեքսանդր Ավետիսյանն** այն անհաջողակներից է, որոնք ներկուսակցական ընտրությունների արդյունքում տեղ չեն զբաղեցրել անգամ առաջին հարյուրակում: Ավետիսյանը նախընտրական նախնական ցուցակում 134-րդն է, նա, ըստ երեւույթին, շանս չունի հաջորդ խորհրդարան անցնելու: Զրուցել ենք պատգամավորի հետ, որը մինչ մանդատ ստանալը Նիկոլ Փաշինյանի խորհրդականն էր:

- Պարոն Ավետիսյան, Ձեզ համար սպասելի՞ էր, որ այդքան քիչ ձայն կհավաքեք, ինչպե՞ս կբացատրեիք՝ լավ չե՞ք աշխատել, պասի՞վ եք եղել:

- Բնականաբար, ես իմ արդյունքներից այնքան էլ գոհ չեմ, բայց դե՝ ցանկացած ժողովրդավարական ընտրությունների պարագայում հնարավոր չէ կանխատեսել, թե ինչ արդյունք կգրանցվի: Ես որեւէ կասկած չունեմ, որ հունիսին սպասվող ընտրությունները կրկին անցնելու են օրենքի սահմաններում՝ թափանցիկ, ժողովրդավար եղանակով: Բայց որեւէ մեկը կարող է կանխատեսել, թե որ ուժն ինչքան ձայն կունենա, իհարկե՝ ոչ: Ես կանխատեսում էի, որ իմ ձայները 150-ից ավել պետք է լինեն, բայց այդպես ստացվեց:

- Ինչո՞ւ, Դուք է՞լ եք այն կարծիքին, որ ընտրություններում, ամեն դեպքում, ներքին ուղղորդումներ են եղել, տեղեկություններ կան, որ որոշների համար լավ էլ զգուշացրել են գաղտնի, օրինակ՝ որոշ ճամբարափոխներ կամ ոչ ակտիվ ու անհայտ կուսակցականներ բավականին բարձր տեղերում են հայտնվել, եւ դա եւս խոսուն փաստ է:

- Եթե նման հարցեր ունենայի, Ձեզ մոտ, իհարկե, չէի արտահայտվի, բայց գոնե ներկուսակցական քննարկումների ժամանակ կբարձրաձայնեի: Բայց անկեղծ եմ ասում՝ նման տեղեկություններ չունեմ, իսկ ասեկոսեներ միշտ էլ լինում են:

- Բայց Դուք էլ եք ակնկալել, որ առնվազն 150 ձայն պետք է ստանայիք....

- Դա իմ սուբյեկտիվ ակնկալիքն է եղել:

- Դուք ՔՊ հնաբնակներից եք, չէ՞, շարքերին ծանոթ, Ձեզ ճանաչելու խնդիր կա՞ր, թե՞ այլ գործոններ նպաստեցին: Օրինակ, արդարացի՞ էր նման ընտրական մեխանիզմով ցուցակ ձեւավորելը, երբ ընտրողները տարածքային կառույցների անդամներն են, եւ պարզ չէ, թե ինչ սկզբունքներով, ինչ չափորոշիչներով են առաջնորդվելու, թեեւ լավ էլ պարզ է՝ ծանոթ, մտերիմ եւ այլն, բայց ոչ ելնելով պրոֆեսիոնալիզմից, մարդու որակներից:

- Ես ՔՊ-ում եմ 2016 թվականից, բայց սա առաջին անգամը չէ, որ այս մեթոդով է ձեւավորվում մեր ցուցակը: 2017 թվականին՝ խորհրդարանական ընտրություններին, երբ «Ելք» դաշինքով էինք մասնակցում, ցուցակները ձեւավորվեցին ներկուսակցական ընտրություններով, գոնե՝ մեր կուսակցության ցուցակը: Ուղղակի, այո, հիմա, բնականաբար, պատվիրակների քանակը շատ ավելի մեծ է, քան 2017-ին: Քանի որ պատվիրակների քանակը շատ մեծ է, չի բացառվում, որ ինչ-որ սուբյեկտիվ գործոններ աշխատած լինեն, բայց ամեն ինչը եղել է նորմալ, արտառոց բան տեղի չի ունեցել: Այո, ես իմ արդյունքից գոհ չեմ, դե, ունենք այն, ինչ ունենք: Եթե ինչ-որ մեկին կա մեղադրելու, ապա ինքս ինձ պիտի մեղադրեմ, որ երեւի մի քիչ ակտիվ չեմ եղել որպես պատգամավոր:

- Հիմա արդա՞ր է, որ Դուք չեք լինելու հաջորդ խորհրդարանում:

- Դե, հա:

- Իսկ կարո՞ղ է ընդդիմադիր դառնաք:

- Մինչ 2016-ը որեւէ կուսակցության անդամ չեմ եղել, 2016-ից մտել եմ այս թիմ, հիմա էլ թիմում եմ, որեւէ մեկից ո՛չ նեղացած եմ, ո՛չ կնեղանամ ու կարծում եմ՝ երեւի 100 տոկոսով կանխատեսում անելը սխալ է, բայց 99.95 տոկոս ՔՊ-ն իմ առաջին եւ վերջին կուսակցությունը կլինի, 100 տոկոսով կանխատեսում անելը սխալ է:

- Իսկ Դուք հիպոթեքով բնակարան չե՞ք վերցրել՝ իշխանության գալուց հետո, հիմա եթե պատգամավոր չլինեք, ո՞նց եք փակելու հիպոթեքը, ՔՊ-ից շատերի աշխատանքային կարիերան սկսվել է 2018-ից, այս տարիներին վարկեր են վերցրել եւ ասում են, որ գլխավոր հոգսը դա է, թե ինչպես են իրենց վարկերը փակելու:

- Ես բնակարան ունեմ, որտեղ մայրս է բնակվում, 2018 թվականին վարձով բնակվում էի Կոմիտասում, այսօր բնակվում եմ նույն բնակարանում՝ վարձով: Ես չգիտեմ՝ ով ինչպես է փակելու վարկերը, բայց կարծում եմ, որ պատգամավոր չլինեն, այլ տեղ կաշխատեն, փառք Աստծո, միջին աշխատավարձը մեզ մոտ վատ չէ:

Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ՀԱԵ

ԵԹԵ 2 ԶԱՎԱԿ ՈՒՆԵՍ, ՄԵԿԸ՝ ՀԻՎԱՆԴ, ՄԵԿԸ՝ ԱՌՈՂՋ, ՈՐԻՆ ԱՎԵԼԻ ՇԱՏ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԴԱՐՁՆԵՍ

Ապրիլի 12-ին Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռն Ավստրիայում տեղի ունեցող Եպիսկոպոսաց Ժողովի հայտարարությունը տարածեց, ինչը բավականին արագ ու լայն տարածում գտավ եւ ոչ միանշանակ ընդունվեց հավատավոր հանրույթի կողմից: Մի մասը ողջունեց եւ համարեց, որ այն բավականին սուր եւ հոգեւոր աշխարհին սազական հայտարարություն էր, որով ՀԱԵ 25 եպիսկոպոսներն իրենց վճռականությունն են հայտնում, որ հայոց եկեղեցին ամուր է, իսկ նրա հայրապետը՝ անփոփոխելի: Մյուս մասը որոշակիորեն հիասթափված էր, քանի որ այլ սպասելիքներ ուներ հավաքից: Օրինակ՝ ակնկալում էին, որ տիրադավ հոգեւորականները կարգալույծ կարվեն, իսկ հավաքը եւ Վեհափառը նրանց կարգալույծ հռչակելու փոխարեն արդեն քանիերորդ անգամ դարձի գալու կոչեր են անում, եւ այնպիսի տպավորություն է, որ Գարեգին Բ կաթողիկոսը եւ բարձրաստիճան հոգեւորականները դեռ հույսեր են փայփայում՝ իշխանությունների հետ հարաբերությունները լավացնելու, շտկելու առումով: Կարծում են, որ իրենց ամենավատ բառերով պիտակավորած, իրենց եղբայրներին բանտարկած Փաշինյանն ու թիմը դեռ կարող են գիտակցել իրենց պահվածքի անթույլատրելիությունը եւ դարձի գալ, ինչպես Կճոյանն ու մյուս 8 տիրադավները: Ի դեպ, այն, որ Փաշինյանի այս պայքարը լիովին ձախողված է, ոչ միայն ապացուցվում է նրանով, որ նա այլեւս քայլեր չունի անելու՝ ինչ հնարավոր էր, արել է եւ արդյունքի չի հասել, այլ նաեւ նրանով, որ 10 տիրադավներից մեկը՝ ԱՄՆ արեւմտյան թեմի առաջնորդ Հովնան եպիսկոպոսը, վերադարձավ կանոնական դաշտ եւ ստորագրել է եպիսկոպոսների այս հայտարարությունը: Պարզապես միամտություն է կարծել, որ Նիկոլ Փաշինյանի հետ կարելի է կոմպրոմիսի գալ՝ ով ծնկում է նրա առաջ, վաղ թե ուշ զղջում է եւ ավելի թանկ վճարում. Առուշ Առուշանյանի, Արմեն Չարչյանի, Հովիկ Աբրահամյանի եւ շատ ուրիշների օրինակն ապացուցում է դա: Մենք փորձեցինք Հայաստանի մի քանի եպիսկոպոսներից մեկնաբանություն ստանալ՝ Եպիսկոպոսաց Ժողովի եւ ամփոփիչ հայտարարության վերաբերյալ, սակայն հավաքին մասնակցած եպիսկոպոսներից մի քանիսը հայտարարեցին, որ չեն ուզում խոսել, մեկն ասաց՝ չի պատրաստվում բավարարել մեր ընթերցողների հետաքրքրությունները: Զրուցեցինք **Տեր Զարեհ քահանա Աշուրյանի** հետ:

- Եպիսկոպոսաց հավաքի հայտարարությունը շատերի մոտ տարակուսանք է առաջացրել, մարդիկ ավելի կտրուկ, վճռական հայտարարության էին սպասում: Ի վերջո՝ ինչո՞ւ է Վեհափառը, ըստ Ձեզ, տիրադավներին շարունակ հորդորում դարձի գալ եւ վերադառնալ Եկեղեցու կանոնական դաշտ: Չէ՞ որ նրանք այդքան հայտարարություններ են արել Եկեղեցու դեմ, փնովել են կաթողիկոսին, դավաճանել: Առհասարակ՝ իշխանությունների հետ այս փուլում կոմպրոմիսի գնալու փորձերը տեղի՞ն են:

- Ամեն դեպքում, Եկեղեցին չի կարող հասարակության կարծիքով եւ պահանջներով առաջնորդվել: Եկեղեցին միշտ էլ սխալներից հետ կանգնելու համար մարդկանց հնարավորություն է տալիս: Աստվածաշնչի մեջ հստակ գրված է, որ Աստված մեղավորի մահը չի ուզում…. ցանկացած մարդ, ով գործում է սխալներ, ունի հնարավորություն՝ դրանցից հետ կանգնելու: Եկեղեցին հենց այս սկզբունքով է առաջնորդվում, այ, եթե Եկեղեցին լիներ աշխարհիկ կառույց, բնականաբար, մարդկանց սպասելիքները կլինեին տեղին, սակայն ո՞րն է Եկեղեցու շահը՝ մարդկանց ապաշխարած հոգիները: Ի վերջո՝ Եկեղեցու նպատակը մեղավորներին դարձի բերելն է: Քրիստոսը 99-ին թողեց ու գնաց մեկ մոլորվածի հետեւից: Այդպես է գրված Ավետարանում:

- Իսկ հնարավոր չէ՞ նրանց Եկեղեցուց դուրս բժշկել: Ի վերջո, այդ մարդիկ արդեն քանիցս Եկեղեցու դեմ կոնկրետ հայտարարություններով ու գործողություններով են հանդես եկել: Հավատավոր մարդիկ այլեւս նրանց չեն վստահում:

- Դա արդեն ամեն մեկի անձնական մոտեցումն է՝ նմաններին կվստահեն, թե ոչ, բայց, ամեն դեպքում, եթե նրանք վերադառնան Եկեղեցի, Եկեղեցին պետք է նրանց հնարավորություն տա: Ապաշխարող մարդուն չենք կարող մերժել: Եթե մարդն ուզում է դարձի գալ, մենք չենք կարող նրա դարձի ճանապարհը փակել: Կարող ենք մեղավորին հանել Եկեղեցուց, դա Եկեղեցու իրավունքն է, սակայն մեր շահը ապաշխարող հոգին է, մեր շահը կորցնելը չէ, դա ամենահեշտ բանն է: Մենք պետք է շահենք:

- Ինչպե՞ս է ստացվում, որ Մասյացոտնի թեմի արդեն նախկին առաջնորդին այդպես էլ Եկեղեցին չներեց եւ գնաց նրան կարգալույծ անելու քայլին, իսկ մյուս 8-ի դեպքում չի գնում, ինչո՞վ է այդ մեկը տարբերվում մյուս տիրադավներից:

- Եթե նա էլ ապաշխարության խոսքով հանդես գա, նրան էլ չեն զրկի հնարավորությունից, բայց եթե մարդը շարունակում է մեղք գործել, ամենուր վարկաբեկում է Եկեղեցին, Վեհափառին մեղադրում է պետական դավաճանության մեջ եւ այլն, արդեն իսկ դա նշանակում է, որ նա քանդող է, արդեն իսկ նա պառակտիչ է ու գայթակղող մարդկանց համար:

- Այդ դեպքում՝ մարդիկ ճի՞շտ են մտածում, որ նաեւ իշխանությունների հետ կարող է Եկեղեցին կոմպրոմիսի գնալ:

- Ես չեմ կարող նման հարցեր մեկնաբանել: Ես անձամբ կարծում եմ, որ մեղավոր մարդը քանի դեռ ապրում է, Աստված նրան ապաշխարելու հնարավորություն է տալիս, դարձի գալու: Եթե պատկերավոր ասեմ, ապա, եթե երկու զավակ ունես, մեկը՝ հիվանդ, մեկը՝ առողջ, որի՞ն ավելի շատ ուշադրություն կդարձնես: Հիվանդին, չէ՞, քանի որ նա ունի խնամքի կարիք: Եկեղեցին միշտ էլ այդպես է առաջնորդվել, անձի հարցը չէ այստեղ: Կարեւորը՝ մեղավոր մարդը հետ կանգնի մեղքերից:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԿԱՐԾՈՒՄ Է, ՈՐ ԹՐԱՄՓԻ ՀԵՏ ՄԻ ՔԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ ԱՎԵԼ ՈՒՆԵՑԱՎ, ԻՐ ՎԱՐԿԱՆԻՇԸ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒ Է

Վաշինգտոնում կայացել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի նախաձեռնությամբ Գազայի հարցով խաղաղության խորհրդի առաջին նիստը, որին մասնակցում էին նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն ու Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը: Իր ելույթում ԱՄՆ նախագահը, ի թիվս այլ կոնֆլիկտների, խոսել է նաեւ հայ-ադրբեջանական հակամարտության մասին, նշել, որ 32 տարի տեւած հակամարտությունից հետո Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարները մեծ աշխատանք են կատարել խաղաղության հաստատման ճանապարհին: Դիմելով Փաշինյանին եւ Ալիեւին՝ ԱՄՆ նախագահը, մասնավորապես, ասել է. «Ես շատ շնորհակալ եմ ձեզ, դուք իսկապես մեծ աշխատանք եք կատարել: Դուք արդեն ընկերներ եք: Ի դեպ, երբ նրանք եկան իմ գրասենյակ, նրանք կանգնել էին Օվալաձեւ սենյակի հակառակ կողմերում, իրարից հեռու: Նրանց առաջարկեցի մոտենալ միմյանց: Հասկանալի է, մարդիկ 32 տարի շարունակ սպանել են միմյանց: Մեկ ժամ անց, երբ ստորագրեցինք համաձայնագիրը, նրանք գրկախառնվեցին: Այժմ ունենք խաղաղություն երկու կարեւոր երկրների միջեւ: Ես երբեք չեմ մոռանա այդ ակնթարթները: Դուք կարճ ժամանակում հասաք հաջողության, դուք բավականին ուժեղ եք եւ կարող եք հպարտանալ ձեզնով: Շնորհակալ եմ ձեզ»: ԱՄՆ նախագահին առաջարկել է Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարներին՝ ոտքի կանգնել եւ միմյանց ձեռք սեղմել, ներկաները ծափահարել են, դա արձանագրող լուսանկար էլ կա:

Հիշեցնենք, որ հունվարի 16-ին ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտնել էր, որ Գազայի հատվածում տիրող իրավիճակը կարգավորելու համար Խաղաղության խորհուրդ կձեւավորվի, եւ նա մի շարք պետությունների ղեկավարների (այդ թվում՝ Հայաստանի, Ադրբեջանի, Ռուսաստանի եւ Բելառուսի) հրավիրեց՝ միանալ այդ նախաձեռնությանը: Խորհրդի մշտական անդամ դառնալը բավականին թանկ հաճույք է՝ ենթադրում է 1 միլիարդ դոլարի անդամավճար, բայց դա կարելի է հետո որոշել: Չնայած հենց առաջին նիստին 7 միլիարդ դոլար են հավաքել մասնակիցները: Սա, ըստ էության, ՄԱԿ-ին այլընտրանքային կառույց է, որը Թրամփը որոշել է ստեղծել իր առաջնորդությամբ, եւ որին եվրոպական երկրները չեն մասնակցում: Հունվարի 22-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Դավոսում Դոնալդ Թրամփի հրավերով, որպես հիմնադիր անդամ, մասնակցեց Խաղաղության խորհրդի կանոնադրության ստորագրման հանդիսավոր արարողությանը: Հետագայում Վաշինգտոնը հայտարարեց, որ խորհուրդը կզբաղվի նաեւ այլ տարածաշրջաններում հակամարտությունների կանխարգելմամբ եւ կարգավորմամբ:

Քաղաքագետ **Բենիամին Մաթեւոսյանը,** «Հրապարակի» հետ զրույցում խոսելով այս կառույցի ստեղծման եւ առաջին նիստի մասին, ասում է. «Բախտներս բերեց, որ ընդամենը ասացին՝ սեղմեք ձեռքերը, եթե Թրամփն ավել բան ասեր, իրոք խայտառակ էինք լինելու աշխարհով մեկ: Ինչ վերաբերում է բուն խորհրդին մասնակցելուն, ապա Նիկոլ Փաշինյանը չէր կարող չգնալ նիստին, չէր կարող, որովհետեւ, իր կարծիքով, սա նախընտրական շրջանում հերթական լուսանկարի համար լավագույն հնարավորություններից մեկն է: Նա կարծում է, որ եթե Թրամփի հետ մի քանի լուսանկար ավել ունեցավ, դրանից իր վարկանիշը բարձրանալու է: Մենք մի ֆիկտիվ նախարար ունենք, որը վերջերս մտքի մի «փայլատակում» արեց՝ պնդելով, որ եթե Փաշինյանը Թրամփի կողքին է նստած, դա փաստում է Հայաստանի միջազգային բարձր վարկանիշի մասին: Չենք խոսում այն մասին, որ Փաշինյանը զուտ «մասսովկայի» դերում էր, սակայն դա այն գինն է, որը պատրաստ է վճարել, իսկ հայ ժողովուրդն իր նախընտրական ֆոտոսեսիաների համար վճարում է 9 միլիարդ 11 մլն դոլար գումար, ուղիղ այդքան գումար Վենսը Հայաստանից տարավ…. Նիկոլին անհրաժեշտ էր նախընտրական լուսանկար ու տեսանյութ, նա ստացավ: Հարցեր են հնչում՝ այդ հարթակը հնարավոր չէ՞ր օգտագործել Ալիեւի վերջին հայտարարություններին պատասխանելու համար: Հիշեցնենք, որ Մյունխենի անվտանգության գագաթնաժողովի ժամանակ Ալիեւն ասաց՝ գնացեք, խաղաղության խաչմերուկը ստացեք Բայդենից, եթե կարող եք: Տարիներ առաջ Փաշինյանն Ալիեւի հետ բանավեճ ունեցավ Մյունխենում, այս անգամ նա չգնաց այնտեղ, քանի որ Ալիեւից ավելի լավ գիտի, որ խաղաղության խաչմերուկ չկա, որ այն, ինչ տվել է, Զանգեզուրի միջանցք է, նա խուսափում է բացահայտ քննարկումներից, քանի որ չէր կարող Ալիեւին հակադրվել այս փուլում: Փաշինյանին ոչ միայն Թրամփի, Վենսի հետ են հարկավոր լուսանկարներ, այլեւ՝ Ալիեւի, Էրդողանի, չզարմանաք, որ անգամ այդ նկարները ՔՊ-ն իր նախընտրական քարոզարշավների ժամանակ օգտագործի»:

ՊԱՐԵԿ

ԵԹԵ 100 ԱԿՏԻՑ 20-Ն Է ԲՈՂՈՔԱՐԿՎԵԼ, ՉԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ՝ ՄՆԱՑԱԾ 80-Ն ԱՆԹԵՐԻ ԵՆ

Պարեկային ծառայության ներդրումը Հայաստանում ոստիկանության բարեփոխումների քայլերից հայտարարվեց: Համակարգը ձեւավորվեց որպես արագ արձագանքող, տեխնիկապես հագեցած եւ կոռուպցիոն ռիսկերից հնարավորինս զերծ ծառայություն, որը պետք է ոչ միայն վերահսկեր, այլեւ՝ օգներ, կանխեր, բացատրեր ու բացահայտեր: Չեմ ուզում սեւացնել ամեն ինչ՝ իմ տեսածով ու հասկացածով պարեկային ծառայություն իրականացնող ոստիկանները կարեւոր դեր են խաղում հասարակական կյանքում: Կարգազանցությունը նվազել է: Երեկ ընկերներիցս մեկը բողոքեց, որ փողոցը սխալ տեղով հատելու համար 10 հազար դրամ տուգանք են գրել: Տհաճ է, բայց թող կարգազանց հետիոտների թիվը նվազի: Կարգազանց վարորդների թիվն է նվազում: Գողությունների նվազման մասին պաշտոնական հաղորդագրություններ կան: Մի խոսքով՝ անզեն աչքով տեսանելի է, որ պարեկային ծառայությունը որոշ չափով կատարում է իր դերը: Բայց… Հենց այդ «բայց»-ն է ստիպում գրել այս հոդվածը:

ԵՐԲ ՔԱՆԱԿԸ ՍԿՍՈՒՄ Է ՀԱՂԹԵԼ ՈՐԱԿԻՆ

Վերջին ամիսներին շրջանառվում են խոսակցություններ, որ որոշ մարզերում պարեկների գրած ակտերի քանակը դիտվում է որպես նրանց աշխատանքի արդյունավետության չափանիշ: Պաշտոնապես «պլանի» գոյությունը չեն հաստատում, սակայն հանրային ընկալումն արդեն կա: Իսկ իրավապահ համակարգում ընկալումը երբեմն ավելի ուժեղ է, քան պաշտոնական պարզաբանումը: Հասարակական գործիչ Կարեն Հեքիմյանը մի գրառում էր արել Վանաձորում տեղի ունեցած դեպքի առնչությամբ. ամրագոտի չկապելու համար ակտ էր կազմվել, թեեւ վարորդը փաստացի ամրակապված է եղել: Ըստ ներկայացվածի՝ պարեկը նույնիսկ ասել է. «Ես ամրագոտի գրեմ, դու բողոքիր»: Եթե նման արտահայտություն հնչել է, ապա խնդիրը մեկ ակտը չէ, այլ՝ վերաբերմունքը: Վանաձորի պարեկային ծառայության աղբյուրներից շրջանառվող տեղեկություններով՝ ամրագոտու խախտման ակտերի դեմ բողոքների թիվը մեծ է: Եթե պայմանականորեն 100 ակտից բողոքարկվում է միայն 20-ը, ապա 80-ը մնում է ուժի մեջ: Իսկ եթե այդ 80-ի մեջ կան սխալնե՞ր: Այդ դեպքում մենք արդեն գործ ունենք ոչ թե կարգապահության բարձրացման, այլ քաղաքացիների համբերության հաշվին «արդյունք» գրանցելու հետ:

«ՁԵՌՔԻ ՀԵՏ՝ ՆԱԵՎ ՊԱՐԵԿ»

Մեր հասարակության մեջ կա մտածելակերպ, որ ամեն հայ մարդ կարող է աշխատել ցանկացած տեղ: Այսինքն՝ «ձեռքի հետ» ամեն գործ կարելի է անել: Անեկդոտ էլ կա՝ հո ծառայողական մեքենայից վայր չի՞ ընկնելու: Այս մտածելակերպը վտանգավոր է հատկապես այն համակարգերում, որտեղ յուրաքանչյուր ստորագրություն իրավական հետեւանք ունի: Պատահաբար ծանոթացա վարչական իրավախախտման վերաբերյալ կազմված մի արձանագրության: Երեւան-Իջեւան Մ-4 ճանապարհին ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Կոտայքի գումարտակի 1-ին վաշտի 2-րդ դասակի կրտսեր պարեկային ոստիկան Ռաֆիկ Սողոմոնյանն արձանագրություն է կազմել Իջեւան քաղաքի բնակիչ Համլետ Նալբանդյանի նկատմամբ՝ վարորդական վկայականը տանը մոռանալու համար: Թվում է՝ սովորական դեպք է: Բայց արձանագրության մեջ նշված է, որ Համլետ Նալբանդյանը բնակվում է… Շիրակի մարզի Իջեւան քաղաքում: Գրչի մի հարվածով Տավուշը դարձել է Շիրակ: Սա կարող է մանրուք թվալ, բայց վարչական ակտն իրավական փաստաթուղթ է: Այն կարող է բողոքարկվել, դառնալ դատական վարույթի առարկա, կրել իրավական հետեւանքներ: Եթե փաստաթղթում նույնիսկ բնակության վայրն է սխալ գրվել, ապա ի՞նչ վստահությամբ պետք է քաղաքացին ընդունի այդ ակտի իրավաչափ լինելը: Խնդիրը մեկ պարեկի սխալը չէ: Խնդիրը վերահսկողության մեխանիզմն է: Ո՞վ է ստուգում ակտերը: Կա՞ ներքին վերահսկողություն: Թե՞ կարեւորն այն է, որ ակտը գրվել է, թիվը լրացվել է, բյուջեն հարստացել է:

ԻՆՉՈ՞Ւ ՄԱՐԴԻԿ ՀԱՃԱԽ ՉԵՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

Ինձ հաճախ ասում են՝ «եթե սխալ է, թող բողոքարկեն»: Թերեւս ճիշտ են: Բայց իրականում քաղաքացին հաշվարկ է անում՝ բողոքարկման գործընթացը ժամանակ է պահանջում, պետք է գրել դիմում, գնալ, սպասել, հետեւել ընթացքին: Շատերը մտածում են՝ «10 հազար դրամ է, վճարեմ, ժամանակս չվատնեմ»: Եթե 100 ակտից միայն 20-ն է բողոքարկվում, դա չի նշանակում, որ մնացած 80-ն անթերի է: Դա կարող է նշանակել, որ պարզապես 80 մարդ հոգնել է պայքարելուց: Իսկ լուռ բողոքողն ամենավտանգավոր շերտն է: Այն չի արտահայտվում բարձրաձայն, բայց բողոքը կուտակվում է:

Օրենսդրությամբ պարեկային ծառայությունը կանխարգելիչ, կարգավորող օղակ է: Այն ստեղծվել է, որպեսզի օգնի, բացատրի, կարգավորի: Բայց եթե քաղաքացին սկսում է պարեկին համարել «տուգանքի գործիք», ապա այդտեղ բարեփոխում չկա: Պարեկի հեղինակության հիմքում ոչ թե խստությունն է, այլ՝ արդարությունը: Եթե մարդը վստահ է, որ իրեն կանգնեցրել են անվտանգության համար, նա կընկալի նույնիսկ տուգանքը: Բայց եթե կասկած կա, որ իրեն կանգնեցրել են «պլան կատարելու» համար, ապա նույնիսկ օրինական ակտը կընկալվի որպես անարդարություն:

ԻՆՉ ԱՆԵԼ

Խնդիրը լուծելի է, եթե կա կամք: Անհրաժեշտ են իրավական պատրաստվածության պարբերական վերապատրաստումներ, վարչական ակտերի ներքին որակի վերահսկողություն, բողոքարկման պարզեցված եւ արագ ընթացակարգ, հրապարակային վիճակագրություն՝ քանի ակտ է կազմվել, քանիսն է բողոքարկվել, քանիսն է բեկանվել, եւ ամենակարեւորը՝ բացատրել, մինչեւ տուգանելը: Քաղաքացին պետք է զգա, որ ինքը գործընկեր է, ոչ թե վիճակագրական միավոր ու «տուգանքի մատերիալ»: Ես չեմ գրում այս հոդվածը՝ պարեկային ծառայությունը վարկաբեկելու համար: Գրում եմ, որովհետեւ ուզում եմ, որ այն հաջողի: Այն ընթացքի մեջ գտնվող բարեփոխում է, բայց եթե չնկատենք բացերը, չխոսենք սխալների մասին, չարձագանքենք վստահության «ճեղքերը», ապա ամենալավ գաղափարն էլ կարող է խաթարվել: Բարեփոխումը նոր մեքենաներով, նոր համազգեստով չի ավարտվում: Այն սկսվում է վստահությունից: Իսկ վստահությունը կառուցվում է ճշգրտությամբ, արդարությամբ եւ հարգանքով:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՈՐՈՇԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՆ

Մեզ ասացին, որ հունվար-փետրվար ամիսներին անշարժ գույքի գործակալները բնակարանային վաճառքի կտրուկ աճ են արձանագրել եւ պնդում են, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ բնակարանների պահանջարկը կտրուկ աճել է: Ինչո՞վ է այն պայմանավորված, անշարժ գույքի շուկայում գների փոփոխություն նկատվե՞լ է վերջին շրջանում, թե՞ ոչ: Թեմայի մասին «Հրապարակը» զրուցել է Silver Rea գործակալության ղեկավար, անշարժ գույքի գործակալ **Անդրանիկ Հարությունովի** հետ: Նա, խոսելով թեմայի մասին, նկատեց. «Կան գործակալներ, ովքեր խոսում են ընդհանուր շուկայի մասին, սակայն նրանց աշխատանքը տարբեր պրոֆիլի է: Կան գործակալներ, ովքեր առաջնային շուկայով են զբաղվում, կան գործակալներ, ովքեր զբաղվում են երկրորդայինով, կան նաեւ ընկերություններ, որոնք զբաղվում են վարձակալությամբ եւ այլն: Ամեն մեկն իր տեսադաշտի չափով է դատողություններ անում շուկայի մասին, բայց շուկայի հիմնական ակտիվության մասին թվերն են խոսում: Թվերը ստանում ենք Կադաստրի կոմիտեից: Ես ունեմ 18 տարվա փորձառություն, սակայն վերջին մի քանի տարիների ընթացքում ոլորտի մասին սկսել են խոսել մարդիկ, ովքեր ոչ մի կապ չունեն ոլորտի հետ: Օրինակ՝ երգիչ կա, որ անշարժ գույքի շուկայի մասին գրառումներ է անում, կան մարդիկ, ովքեր անշարժ գույքի շուկան օգտագործում են քաղաքական նպատակներով:

Իշխանականներն ասում են, որ շուկայում դրական դինամիկա է նկատվում, իսկ որոշ ընդդիմադիրներ էլ ասում են, որ վիճակը լավ չէ: Այդ է պատճառը, որ մենք պետք է թվերով առաջնորդվենք: Թվերի մասին դեռեւս վաղ է խոսելը, քանի որ այն կիսամյակով է հաշվարկվում: Այդ թվերով մի ժամանակ չէինք կարող խոսել առաջնային շուկայի մասին, սակայն հիմա իրավիճակն այլ է՝ նախորդ տարվանից տրամադրվում է գնման իրավունքի ստատիստիկա՝ կիսամյակը մեկ անգամ: Նոր կառուցվող շենքերը շատ են, թվերի մասին դեռեւս չկա տեղեկություն: Եթե իմ սեփական ընկերության փորձի մասին խոսեմ, ապա մեր ընկերությունում, այո, ակտիվություն է նկատվել: Թեպետ չեմ կարող համեմատել նախորդ տարվա հետ, քանի որ ունենք տարբեր նախագծեր, իսկ մեր ընկերությունը մասնագիտացված է առաջնային շուկայում, ունենք մի քանի պրոյեկտներ, որոնց վաճառքով բացառապես մեր ընկերությունն է զբաղվում: Եթե համեմատեմ նախորդ տարվա պատկերի հետ, սխալ կլինի, քանի որ նախորդ տարի այլ շինարարական փուլ էր, այս տարի՝ այլ: Ամեն դեպքում, եթե խոսում ենք շուկայի մասին, ապա, այո, այն տրանսֆորմացիայի է ենթարկվում, եւ հիմնականում ակտիվ են պետական սուբսիդիաներ ունեցողները: Եկամտահարկի վերադարձի մասին օրենքը բավականին մեծ ակտիվություն է շուկային հաղորդել: Ինչպես նաեւ ՊՆ-ի ծրագրի մասին է խոսքը, երբ զինվորականները սուբսիդավորված բնակարաններ են ձեռք բերում: Երեւան քաղաքում եկամտահարկի մասին օրենքն ավարտվել է, այժմ ակտիվ է երեւանամերձ հատվածը: Շուկան ակտիվ է այդ հատվածներում: Օրինակ՝ Երեւան քաղաքում բազմաթիվ կառուցապատողներ, երբ նախորդ տարի դուրս եկան եկամտային հարկի վերադարձից, վաճառքները ենթարկվեցին տրանսֆորմացիայի: Նրանք սկսեցին վաճառել տարաժամկետ, առանց հիպոթեքային վարկերի, մինչեւ 10 տարի մարման ժամկետ, մարդիկ ընտրում են 3 տարի, 4 տարի, 5 տարի, մինչեւ 10 տարի…. այն ահագին ակտիվություն բերեց շուկային: Այդ մեխանիզմով արտասահմանի հայերը սկսել են բնակարաններ գնել Հայաստանում, քանի որ այն ձեռնտու տարբերակ է: Բացի այդ, անշարժ գույք գնելը համարվում է ներդրում: Շուկան ամեն տարի փոփոխվում է: Եթե նկատել եք՝ վերջին 30 տարիներին անշարժ գույքը թանկանում է միայն: Այն մարդկանց համար լավագույն ներդրումներից մեկն է դարձել: Փողի արժեզրկման վտանգը ստիպում է մարդկանց մտածել նման ներդրումների մասին»:

Բնակարանների գները վերջին մեկ տարում աճե՞լ են, թե՞ նվազել: «Դրանք ամեն տարի աճում են դինամիկ: Բայց պետք է մի բան հաշվի առնել. անշարժ գույքը թանկանում է, իսկ փողն էժանանում է: Երեք տարի առաջվա գույքի գինն այս տարվա հետ համեմատենք, ապա կա աճ, բայց նաեւ կա գույքը ստեղծելու համար տարբեր ապրանքների գների աճ, օրինակ՝ շինանյութի գների աճ եւ այլն, շինթույլտվության համար սահմանված տուրքերը նույնպես փոխվել են, եւ այսպես շարունակ: Այդ ամենն ազդում է անշարժ գույքի գնագոյացման վրա»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԻՆՔԸ՝ ՓԱՇԻՆՅԱՆԸ, ՍԵՐԳԱՐ ՔԸԼԸՉԸ, ՀԱՔԱՆ ՖԻԴԱՆԸ, ԻԼՀԱՄ ԱԼԻԵՎԸ ԵՎ ՌԵՋԵՓ ԷՐԴՈՂԱՆԸ

Փաշինյանը, որ 2018 թվականին իշխանության է եկել հակասահմանադրական իշխանափոխության միջոցով, նախապատրաստվում է իշխանազավթման հերթական արարին՝ հող է նախապատրաստում՝ 2026 թվականին նշանակված խորհրդարանական ընտրությունները չեղարկելու համար: Խոսքը ոչ թե քվեարկությունը չեղարկելու մասին է, այլ՝ ընտրությունները, քվեարկությունը կարող է լինել, բայց քաղաքացիները զրկվեն ընտրելու եւ ընտրվելու իրավունքից, քվեարկությունը կրի կեղծ եւ ֆորմալ բնույթ: Քանի որ Փաշինյանն իրեն մրցակից է տեսնում Սամվել Կարապետյանի «Ուժեղ Հայաստանին», Գագիկ Ծառուկյանի ու ԲՀԿ-ի շուրջ ձեւավորվող դաշինքին եւ Ռոբերտ Քոչարյանի ղեկավարած «Հայաստան» դաշինքին, որոշել է սրանց «նշանակել» Ռուսաստանի գործակալներ եւ հրահանգել է առաջիկա ամիսներին քարոզչությունն իրականացնել հենց այս ուղղությամբ:

Փաշինյանի պաշտոնական քարոզչությունն իրականացնող Հանրային կոչվող հեռուստաընկերության եթերով հաղորդավարը, դիմելով Անդրանիկ Թեւանյանին, որի ղեկավարած «Մայր Հայաստան» կուսակցության համագումարը որոշել է ընտրություններին մասնակցել ԲՀԿ-ի հետ համատեղ, ասում է. «Մարդիկ ասում են, որ Ռուսաստանն է ձեզ համախմբում, Ռուսաստանից Սամվել Կարապետյանն է, որ ասում է՝ ես Ռուսաստանի հետ կապ չունեմ, Քոչարյանն է, որ ամենից անկեղծն է, ասում է՝ կապ ունեմ, ամեն ինչ լավ կլինի իրենց հետ, եւ դուք եք, դուք էլ եք Ռուսաստանի կողմից, Ծառուկյանն էլ է Ռուսաստանի հետ, սա ոնց որ Ռուսաստանի գծած լայն համախմբումն է: Դուք ռուսական ծրագիր եք, որովհետեւ Սամվել Կարապետյանը Ռուսաստանի հետ կապ ունի: Ես «կապ ունի» ասելով, նկատի չունեմ, որ նա այնտեղ ապրում է, ես նկատի ունեմ քաղաքական կապի մասին, որ նրան ուղարկել են Էնտեղից»:

Հանրայինի հաղորդավարը, փաստացի, երեք քաղաքական ուժի մեղադրում է Ռուսաստանի հետ կապ ունենալու, Ռուսաստանից ուղարկված լինելու եւ կառավարվելու մեջ, մեղադրում է, որ Ռուսաստանն է Հայաստանում հանրային համախմբում կազմակերպում՝ ընդդեմ գործող իշխանության: Եվ այս պնդումներն արվում են առանց որեւէ ապացույցի՝ հղում անելով մարդկանց խոսակցությունների կամ ինչ-որ փորձագետների կարծիքների վրա: Իրականում, հաղորդավարի այս պնդումները հենվում են Փաշինյանի այն հրահանգի վրա, որ իրենք պատրաստվում են քաղաքական դաշտից դուրս շպրտել նախկին նախագահներին եւ օլիգարխներին:

Հետեւելով նույն հրահանգին՝ փաշինյանական թեզը կրկնում է ԱԺ փոխնախագահի պաշտոնը զբաղեցնող Ռուբեն Ռուբինյանը, որը հայտնի է որպես իշխանության թուրքամետ թեւի ներկայացուցիչ կամ համակարգող, եթերում հայտարարելով. «Մենք պիտի տեր կանգնենք էս խաղաղությանը, մենք պիտի տեր կանգնենք այն ամենին, ինչին հասել ենք այսքան զրկանքների գնով, եւ չպիտի թույլ տանք Քոչարյանին, ռուսաստանցի օլիգարխին ու տեղական բելառուսամետ հակումներով օլիգարխին՝ որոշել մեր երկրի ճակատագիրը»: Ովքե՞ր են այդ «մենք»-ը, որ պետք է թույլ չտան կամ խոչընդոտեն հայ ընտրողի քվեարկությանը. ինքը՝ Փաշինյանը, Սերգար Քըլըչը, Հաքան Ֆիդանը, Իլհամ Ալիեւը եւ Ռեջեփ Էրդողանը: Բայց ամենակարեւոր հարցն այն է, թե ինչպես նրանք պետք է թույլ չտան, որ ամենամեծ հանրային վարկանիշ եւ հանրային վստահություն ունեցող երեք ուժերը չորոշեն երկրի ճակատագիրը:

Փաշինյանական նույնաբովանդակ քարոզչությունն իրականացնում է նաեւ ԶՊ-ի մեկ այլ հաստիքային քարոզիչ՝ Արամ Սարգսյանը, որը Փաշինյանի ընտանիքին պատկանող ՀԺ-ի եթերում ասում է, որ եթե Կարապետյանը չկատարի Պուտինի հրահանգները, ապա կպատժվի: Նույն տրամաբանությունն է, որ ընդդիմությանը եւ նրա առաջնորդներին ներկայացնեն որպես Պուտինի աշխատողներ, ենթականեր:

Փաշինյանական ծրագիրը պարզ է. քանի որ «Ուժեղ Հայաստանը», ԲՀԿ-ն եւ նրա շուրջ համախմբվող ուժերը, «Հայաստան» դաշինքը ամենամեծ հանրային աջակցություն ունեցող կուսակցություններն են, որոնք ընտրություններում կարող են ստանալ մեծամասնություն եւ դաշինք կազմելով ձեւավորել նոր իշխանություն, նրանց պետք է ուղղակի թույլ չտալ մասնակցել ընտրություններին: Իսկ թույլ չտալ հնարավոր է միայն մի ձեւով. առաջիկա երկու-երեք ամիսներին նրանց հռչակել Ռուսաստանի գործակալներ, մեղադրել Ռուսաստանից ուղղորդվելու եւ Ռուսաստանից կառավարվելու մեջ եւ հանուն Հայաստանի ինքնիշխանության եւ անկախության պաշտպանության՝ թույլ չտալ, որ նրանք մասնակցեն ընտրություններին:

Փաշինյանը եւ նրա թիմակիցները հասկանում են, որ դա կնշանակի ընտրությունների փաստացի չեղարկում, դա կլինի իշխանության բռնազավթում, որը քրեորեն պատժելի արարք է, բայց իրենց թվում է, թե, ունենալով հավաքական Արեւմուտքի՝ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի կատարյալ աջակցությունը, կկարողանան մարսել այդ հանցագործությունը:

Փաշինյանն այնքան կարմիր գծեր է հատել՝ անօրինական եւ անթույլատրելի քայլեր արել, որ թվում է, թե այս մեկն էլ կարող է անել ու մարսել: Սակայն Հայաստանում թվացյալ կայունությունը պահպանվում է միայն մի պատճառով, որ դժգոհություն ունեցողները սպասում են ընտրություններին եւ հույս ունեն օրինական եւ սահմանադրական ճանապարհով հեռացնել փաշինյանական ռեժիմին: Եթե ռեժիմը փակի նաեւ այդ ճանապարհը, հանրային դժգոհությունը կարող է եւ անկանխատեսելի դրսեւորումներ ունենալ, եւ այդ դեպքում նրան ԱՄՆ-ն կամ ԵՄ-ն չեն կարող ոչնչով օգնել կամ կարող են օգնել միայն ապաստան տրամադրելով:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ԱՎԻՆՅԱՆԸ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ ՔՊ-Ի ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆՅԱԿԻՑ

Չիչ էր մնացել Տիգրան Ավինյանին մի շնորհակալական նամակ գրեի՝ առ այն, որ շատ էլ լավ է անում, որ Աճառյան փողոցի փոսերը չի լցնում: Չեք պատկերացնի, թե որքան հանգիստ է այսպես: Ինչ ձյունը հալվել, ու փոսերը բացվել են, Աճառյան փողոցում դադարել են վարչապետական կորտեժի մրցարշավները, արդեն որքան ժամանակ է՝ չենք լսում՝ կանգնե՛ք, կանգնե՛ք, քաշի աջ, կանգնի՛ր, տու, տու, տու, «Օպելի» վարորդ, կանգնիր, աջում կանգնի՛ր, այ… Մոտ մեկ ամիս առաջ եմ մեր վերգետնյա անցումի վրա պարեկներ տեսել, որոնք հսկում են, որ վարչապետական կորտեժի անցման պահին քաղաքացիներն ինչ-որ առարկաներ չնետեն ցած: Մի խոսքով՝ Աճառյան փողոցի վրա մե հանդարտություն էր իջել, մե խաղաղություն, որ էլ չասելու:

Երեկ առավոտյան, երբ դեռ մտմտում էի՝ գրե՞լ այս մասին Ավինյանին, թե՝ չգրել, նկատեցի, որ փոսերի շուրջը ասֆալտը կտրտել են, պատրաստվում են կարկատել: Փաստորեն, Աճառյան փողոցի բնակիչներիս ուրախությունը կարող է կարճ տեւել: Ուր որ է՝ Վաշինգտոնից կվերադառնա, ու էլի կսկսվի՝ կանգնե՛ք, կանգնե՛ք, քաշի աջ կանգնի՛ր, տու, տու, տու, «Օպելի» վարորդ, կանգնիր, աջում կանգնի՛ր, այ… Բա հիմա չգրե՞մ՝ պարոն Ավինյան, մենք ի՞նչ վատություն ենք արել քեզ, որ ամեն անգամ հենց Աճառյան փողոցն ես նորոգում: Դուուրիշ փողոցի անուն չգիտե՞ս: Թբիլիսյան խճուղով դրան տարեք Սեւանի դաչա, Գեղարքունիք, Տավուշ, թողեք, աճառյանաբնակները մի քիչ դինջանան այդ վայնասունից:

Ու քանի որ արդեն մտքովս անցել էր Ավինյանին նամակ գրել, ասի՝ չուշացնեմ, երկաթն էլ, հո գիտեք, տաք-տաք են ծեծում: Պարոն Ավինյան, պատահաբար չգիտե՞ք, որ Աճառյան փողոցում ամեն օր ծանր եւ կայուն խցանումներ են լինում: Օրվա գրեթե բոլոր ժամերին փակ են թե՛ դեպի քաղաք իջնող եւ թե՛ քաղաքից դուրս եկող ճանապարհահատվածները: Մի՞թե հնարավոր չէ այնպես կարգավորել երթեւեկությունը, որ ընդամենը 2,5 խաչմերուկ ունեցող փողոցում այդպիսի վիճակներ չստեղծվեն: Ախպոր պես, Աճառյան-Ծարավ աղբյուր խաչմերուկի պարեկներին տարհանեք այդտեղից: Էնքան են «շվիշտոկ» տալիս, որ «խելացի» լուսացույցի ֆազերը «քցում են», ու էդ խեղճ հարիֆն սկսում է անկանոն աշխատել: Մի անգամ նույնիսկ կապույտ լույս էր վառել…

Հարցին վերջնական լուծում տալու համար առաջարկում եմ Ծարավ աղբյուր թաղամասն Աճառյան փողոցի հետ կապել կարճ թունելներով կամ էստակադաներով: Դա էլ հո մետրո կառուցել չէ՞, որ չկարողանաք: Այո, փող է պետք դրա համար, իսկ փող պիտի որ լինի, եթե 8,5 միլիարդ դոլարը, ներողություն արտահայտությանս համար, չեք կոխել ասֆալտի մեջ եւ ամբողջությամբ չեք լափել:

Անցյալ օրն էլ բարեկամս էր զանգել, թե մի բան էլ Գայի պողոտայի երթեւեկության մասին գրի, որովհետեւ մեզ մոտ էլ նույն վիճակն է: Իսկ ես Երեւանում այդպիսի բարեկամներ շատ ունեմ: Երրորդ մասից են զանգում, Չարբախից, Էրեբունուց, Բութանիայից, Տերյան փողոցից, Շրջանայինից, Մոնումենտից, Կոմիտասից, Բաղրամյանից, Ցիրկի խաչմերուկից, Մալաթիայից, Արշակունյացից, Տիգրան Մեծից եւ անգամ՝ ԱՄՆ դեսպանատնից: Ես ո՞ր մեկի ցավին հասնեմ, պարոն Ավինյան, ես հո քաղաքապետ չե՞մ, որ մարդիկ մի բան չասած՝ իսկույն կատարեմ: Ես քո հնարավորություններն ունենայի, պարոն Ավինյան, երթեւեկության հարցը վաղուց լուծած կլինեի: Մի քիչ վարչարարություն ցուցաբերեք: Հեռացրեք բոլոր կարմիր գծերն ու արգելեք մայթեզրին կայանելը: Այսօր Երեւանի բոլոր փողոցների աջ շարքերը կանգնած են, կայանած մեքենաների ծայրը չի երեւում: Շատերը բակից իրենց մեքենան հանում են, որ 1-2 կիլոմետր գնան աշխատանքի եւ ամբողջ օրը կայանեն մայթեզրին: Սա շռայլություն չէ՞ Երեւանի համար: Խոսեք կառավարության հետ, պետական հիմնարկների աշխատողներին պարտադրեք ոտքով գնալ աշխատանքի, ավտոբուս հատկացրեք, որ 30-40 ավտոմեքենայի փոխարեն մեկ ավտոբուսով հասնեն գործատեղ: Տեսեք՝ ինչ է կատարվում կառավարության տան շուրջը, կառավարական մյուս շենքերի շուրջը… Ես քաղաքապետ լինեի, եւ իմ քաղաքում այսպիսի պոռնոգրաֆիա՞ տիրեր…



Երթեւեկությունը չեք կարողանում կարգավորել, ասֆալտ չեք կարողանում անել, մա՞յթ էլ չեք կարողանում սարքել: Կասե՞ք՝ ինչ կազմակերպություն է շահել էկոնոմիկայի նախարարության շրջակայքի մայթերը կարգի բերելու տենդերը: Այդ կազմակերպությունը, պատահաբար, կապ չունի՞ իշխանական որեւէ շրջանակի հետ: Բա մի հատ համեցեք նշված տարածք, պարոն Ավինյան, էկոնոմիկայի նախարարի հետ ձեր սարքած մայթով քայլեք դեպի Տիգրան Մեծի փողոց ու տեսեք, թե ինչպես են սալահատակ շարել մայթին: Նախապես ասեմ՝ զգույշ կքայլեք, դարուփոս է, ոտքներդ չտաք քարերին ու շան փայ չլինեք: Հասկացանք, որ դրսի փողը ՔՊ-ի հետեւն եք մտցնում, որ վերընտրվեք: Բայց մի՞թե չի կարելի վերահսկել, որ մեր հարկերից աշխատավարձ ստացող շինկազմակերպությունը նորմալ անի իր գործը ու չխաբի ձեզ էլ, քաղաքացուն էլ:

Մինչ հանդիպում, պարոն քաղաքապետ: Շատ բան ունեմ քեզ ասելու, կամաց-կամաց կասեմ, որ դու էլ կամաց-կամաց անես:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ԱՅԴ ՀԱՆԴԻՊՈՒՄՆ ԱՆՀՆԱՐ Է ԹԵ՛ ԱՅՍՕՐ, ԹԵ՛ ՄՈՏ ԱՊԱԳԱՅՈՒՄ

*«Հրապարակի» զրուցակիցն ուկրաինացի քաղաքագետ **Եվգենի Մագդան** է:*

- Փետրվարի 18-ին Ժնեւում կայացավ ԱՄՆ-ի, ՌԴ-ի եւ Ուկրաինայի միջեւ եռակողմ բանակցությունների եւս մեկ փուլ: Խոստովանելով, որ այն լարված է անցել, 3 երկրներից էլ դրական ազդակներ են հնչում: Սպիտակ տունը հայտարարել է, որ կողմերը զգալի առաջընթացի են հասել, Մոսկվան եւ Կիեւը համաձայնել են շարունակել աշխատանքը խաղաղության համաձայնագրի ուղղությամբ: Խաղաղությունն իրո՞ք մոտ է:

- Ես հասկանում եմ, որ ԱՄՆ-ի միջնորդությամբ Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ բանակցությունները մեծ ուշադրություն են գրավում ամբողջ աշխարհում, քանի որ ռուս-ուկրաինական պատերազմը ժամանակակից աշխարհում ամենամեծն է: Սակայն ապրելով Ուկրաինայում (մեր երկիրն անկախությունից ի վեր ապրել է ամենածանր ձմեռը՝ Ուկրաինայի էներգետիկ ոլորտի՝ ՌԴ-ից հրետակոծության եւ ուժեղ ցրտերի պատճառով)՝ ես չեմ զգում մոտալուտ խաղաղությունը: Մարտերը շարունակվում են, այդ թվում՝ թիկունքում ուկրաինական քաղաքների հրետակոծությունը: Դոնալդ Թրամփը չի ցանկանում խաղաղություն Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ. նա խաղաղության Նոբելյան մրցանակ է ուզում:

- Ուկրաինայի նախագահը, ամփոփելով Ժնեւի բանակցությունները, նշել է, որ քաղաքական հարցերի շուրջ դեռեւս լուրջ տարաձայնություններ կան: Խոսքը մասնավորապես տարածքային ցավոտ հարցի՝ Դոնբասի մասին է: Նա կրկին պնդել է, որ Կիեւը մտադիր չէ դուրս գալ տարածաշրջանից եւ օկուպացված տարածքները չի ճանաչում որպես ռուսական տարածք: Ի՞նչ ճակատագիր է սպասվում Դոնբասին:

- Հիշեցնեմ. Դոնբասը ներառում է ոչ միայն Դոնեցկի եւ Լուգանսկի մարզերը, այլեւ Դնեպրոպետրովսկի մի մասը: Ռուս օկուպանտները գրավել են Լուգանսկի գրեթե ամբողջ մարզը եւ Դոնեցկի զգալի մասը՝ հսկայական կորուստների գնով: Դոնեցկի մարզն այսօր հսկայական ամրացված տարածք է: Դրանից դուրս գալը կհանգեցներ ինչպես բանակի, այնպես էլ հասարակության բարոյալքմանը, ինչպես նաեւ՝ Ռուսաստանին կտար չափազանց շահավետ դիրք՝ Ուկրաինայի խորքում հետագա հարձակման համար:

- Ի դեպ, New York Times-ը պնդում է, թե Ուկրաինան վերջին բանակցություններում չի բացառել Դոնեցկի մարզի չօկուպացված՝ ապառազմականացված հատվածում համատեղ քաղաքացիական վարչակազմ ստեղծելու հնարավորությունը Ռուսաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Նման սցենարն իրատեսական՞ է՝ հնարավոր խաղաղությունից հետո:

- New York Times-ի լրագրողների նկատմամբ ամենայն հարգանքով (ասում են, որ թերթն ամեն օր դրվում է Թրամփի սեղանին), այս տարբերակը թվում է անիրական:

- Զելենսկին նաեւ մի քանի ուշագրավ հայտարարություն է արել: Օրինակ՝ ընդգծել է, որ ներկայիս առաջնագծի վրա կանգ առնելն արդեն իսկ էական փոխզիջում է: Ուկրաինայի համար ուրի՞շ ի՞նչ ցավոտ զիջումների է պատրաստ գնալ նախագահը:

- Ես ուզում եմ հարցն այլ կերպ ձեւակերպել. ի՞նչ զիջումների է գնացել Ռուսաստանը գրեթե 4 տարվա պատերազմի ընթացքում: Դա ագրեսորն է՝ եթե որեւէ մեկը մոռացել է: Ես հասկանում եմ, որ միջազգային բանակցությունները կսպառնան նրա հեղինակությանը:

- Բանակցությունների հաջորդ փուլը կրկին տեղի կունենա Շվեյցարիայում: Ի՞նչ ակնկալիքներ ունեք դրանից, ի՞նչ մեսիջներով կվերադառնան Կիեւի, Մոսկվայի եւ Վաշինգտոնի ներկայացուցիչները:

- Առավելագույն հնարավոր արդյունքը հրադադարն է. ես չեմ տեսնում խաղաղության պայմանագրի որեւէ պայման: Հիշեցնեմ, որ շատ վերլուծաբաններ չեն տեսնում Ռուսաստանի եւ Ուկրաինայի միջեւ պատերազմի՝ 2026 թվականին ավարտվելու որեւէ հեռանկար, եւ դա ինձ չի զարմացնում:

Արա ԱԼՈՅԱՆ

61 ՕՊԵՐԱՏՈՐԻ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼ ԵՆ

Տավուշի մարզում գործող հեռուստատեսային աշտարակների օպերատորներն ահազանգել են, որ այս տարեսկզբից «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ տնօրինությունն իրենց ազատել է աշխատանքից, իրենց ընտանիքները մնացել են առանց գոյության միջոցների: Նրանց աշխատավայրը՝ հեռուստատեսային աշտարակները գտնվում են Տավուշի մարզի բնակավայրերից բավական հեռու, բարձրադիր տեղանքներում, այդտեղ տանող ճանապարհները բարեկարգ չեն, սակայն իրենք տարիներ շարունակ հաղթահարել են այդ դժվարին ճանապարհները: Բնակավայրերից կտրված, բարձունքի վրա գտնվող հեռուստատեսային աշտարակներում երկար ժամանակ միայնակ մնալը, աշխատելը պահանջում են որոշակի լարվածություն, կենտրոնացվածություն: Հեռուստաաշտարակների օպերատորները տարիներով բարեխղճորեն կատարել են իրենց գործը՝ ապահովելով հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման բարձր որակ: Նրանք տարակուսած են, թե ինչու են իրենց աշխատանքից ազատել:

Այս դժգոհությունների կապակցությամբ փետրվարի 11-ին տեղեկատվական հարցում ուղարկեցի «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ գլխավոր տնօրեն Նարեկ Ադամյանին՝ առաջադրելով հետեւյալ հարցերը. «Տավուշի մարզի հեռուստատեսային աշտարակների օպերատորները դժգոհում են, որ հունվարից իրենց աշխատանքից ազատել են: Քանի՞ օպերատոր է կրճատվել Տավուշի մարզում, քանի՞սը՝ Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանցում, ՀՀ տարածքում: Ինչո՞ւեն այդ կրճատումները կատարվել 2026 թվականին, ինչո՞ւ նախկինում չէր կատարվում: Օպերատորների կրճատումը բացասական չի՞ անդրադառնալու հեռուստատեսային հաղորդումների հեռարձակման որակի վրա, խափանումների պատճառ չի՞ դառնալու»:

Փետրվարի 16-ին ստացել եմ Նարեկ Ադամյանի պատասխանը, որտեղ նշված է. «Տավուշի մարզում «Հայաստանի հեռուստատեսային եւ ռադիոհաղորդիչ ցանց» (ՀՀՌՑ) ՓԲ ընկերության համակարգում հեռուստատեսային աշտարակների օպերատորների հետ աշխատանքային հարաբերությունների փոփոխությունները կատարվել են աշխատակիցների սեփական դիմումների հիման վրա: Նշված հիմքով Տավուշի մարզում գործընթացը վերաբերել է 13 աշխատակցի, իսկ ՀՀ տարածքում՝ 61: Միեւնույն ժամանակ հեռարձակման ցանցի արդիականացման գործընթացի շրջանակում ստեղծվել են աշխատակիցների վերապատրաստման պայմաններ՝ հետագայում հնարավոր համագործակցությունը շարունակելու համատեքստում: 2026 թվականին ՀՀՌՑ-ի կողմից հեռարձակման ցանցի արդիականացման գործընթացի շրջանակում իրականացվել են կադրային փոփոխություններ՝ պայմանավորված ինչպես թվային եւ ավտոմատացված կառավարման համակարգերի, այնպես էլ հեռարձակման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Իրականացված փոփոխությունները որեւէ կերպ չեն ազդել եւ չեն ազդելու հեռուստատեսային եւ ռադիոհաղորդումների հեռարձակման որակի վրա: Ցանցի արդիականացման գործընթացի շրջանակում ՀՀՌՑ-ի կողմից իրականացվում է շարունակական տեխնիկական վերահսկողություն, եւ հեռարձակման կայունությունն ապահովվում է գործող նորմերին եւ տեխնիկական պահանջներին համապատասխան»:

Տարակուսանք է առաջացնում ՀՀՌՑ տնօրենի այն պնդումը, թե՝ «հեռուստատեսային աշտարակների օպերատորների հետ աշխատանքային հարաբերությունների փոփոխությունները կատարվել են աշխատակիցների սեփական դիմումների հիման վրա», ինչո՞ւ որոշեցին 61 օպերատորներ միաժամանակ դիմումներ գրել, ազատվել աշխատանքից, կորցնել իրենց միակ եկամուտը: Եթե նրանք սեփական կամքով են աշխատանքից դուրս եկել, ինչո՞ւ են դժգոհում մեզ:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ինչ է ուրվագծվում ուկրաինական կարգավորման ճակատում

Ուկրաինան հնարավոր է համարում, որ Ռուսաստանը մասնակցի Դոնեցկի մարզի՝ դեռեւս ուկրաինական հսկողության տակ գտնվող հատվածի կառավարմանը՝ գրում է The New York Times պարբերականը: Համաձայն հոդվածի, Ժնեւյան բանակցություններում քննարկվել են քաղաքացիական վարչակազմ ստեղծելու հետ կապված հարցերը, որը գործելու է «ապառազմականացված գոտում», այսինքն՝ Դոնեցկի մարզի այն հատվածում, որը դեռեւս գտնվում է ուկրաինական հսկողության ներքո, եւ որտեղից ռուսական կողմը պահանջում է, որ ուկրաինական կողմը դուրս բերի իր զորքերը: Ենթադրվում է, որ այդ վարչակազմում ներկայացուցիչներ են ունենալու թե՛ ռուսները, թե՛ ուկրաինացիները: Այս վարկածը դեռ պաշտոնապես հաստատված չէ Ուկրաինայի կողմից: Սակայն Զելենսկին հերթական անգամ հայտարարել է, որ Դոնեցկի մարզն ամբողջությամբ չեն զիջի Ռուսաստանին: Առայժմ հայտնի է նաեւ, որ հաջորդ բանակցային ռաունդը՝ ուկրաինական կարգավորման վերաբերյալ, նորից տեղի կունենա Շվեյցարիայում: Ռուսական կողմն էլ նախագահի հատուկ ներկայացուցիչ Կիրիլ Դմիտրիեւի շուրթերով հայտարարել է, որ Միացյալ Նահանգները կարող է ապագայում հրաժարվել Ռուսաստանի նկատմամբ կիրառվող սանկցիոն քաղաքականությունից, քանի որ ամերիկյան բիզնեսը դրանից մեծ կուրստներ է ունենում: Եվ, բացի այդ, կան լավ հնարավորություններ՝ ռուս-ամերիկյան խոշոր նախագծեր իրականացնելու: Դմիտրիեւը նկատել է, որ ամերիկյան բիզնեսի վրա հակառուսական սանկցիաներն արդեն նստել են 300 միլիարդ դոլար, եւ հակառուսական սանկցիաների չեղարկումը Վաշինգտոնի համար բոլոր առումներով է ձեռնտու: Նա նաեւ հետաքրքիր թիվ է հնչեցրել: Ռուս-ամերիկյան համատեղ բիզնես նախագծերի իրականացման պորտֆելը գնահատվում է ոչ պակաս, քան 14 տրիլիոն դոլար: Ընդ որում, ռուս բարձրաստիճան պաշտոնյան նշել է, որ չիրացված ռուս-ամերիկյան բիզնես պոտենցիալի հնարավորությունները շատ ավելին են, քան բարձրաձայնված թվերը: Նկատենք, որ օրերս The Economist պարբերականը գրել էր, թե Ռուսաստանը Միացյալ Նահանգներին 12 տրիլիոն դոլարի գործարք է առաջարկել՝ սանկցիաների մեղմացման կամ ամբողջական չեղարկման դիմաց:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայկական կինոյի տարեգիրը

Կինոարվեստի ի հայտ գալուց անմիջապես հետո սկսվեցին դրա իմաստավորման փորձերը, ու ստեղծվեց կինոքննադատությունը՝ որպես ժանր: Կինոն ներկայում վերածվել է ահռելի մի արդյունաբերության: Եվ տեքստը, չնայած ժամանակակից տեխնոլոգիական եւ վիզուալ պատկերավորման միջոցների ահռելի հնարավորություններին, շարունակում է ամենից կարեւոր դերակատարումն ունենալ կինոյում: Ենթագրերից մինչեւ սցենար եւ կինոքննադատություն կամ կինովերլուծական միտք՝ հիմնված են տեքստի վրա եւ թույլ են տալիս տեսնելու կինոարտադրանքի նոր հեռանկարներն ու նվաճած «բնագծերը»:

Հայկական կինոյի լավագույն գիտակներից մեկը, որի գործերով կարելի է ուսումնասիրել հայկական կինոն, Կարեն Քալանթարն է: Նա իր ուսումնասիրությունները նվիրել է հայկական կինոարվեստին, մասնավորապես՝ դերասան-ռեժիսոր աշխատանքին: Միայն մեկ տասնամյակում ավելի քան 7 տասնյակ հոդվածներ է նվիրել հայկական կինոյին: Նրա գլխավոր աշխատանքը, սակայն, շարունակում է մնալ «Ակնարկներ հայ կինոյի պատմության» երկհատորյակը, որում Քալանթարը ներկայացնում է հայկական ազգային կինոյի պատմությունը՝ ձեւավորումից մինչեւ «պերեստրոյկայի ժամանակներ», երբ զգալի փոփոխություն է սկսել կրել նաեւ կինոլեզուն:

Մասնագիտական գործունեությունը Քալանթարը սկսել է որպես լրագրող՝ աշխատելով որպես «Կոմունիստ» թերթի խմբագրի տեղակալ, ինչպես նաեւ՝ «Լիտերատուրնայա գազետա»-ի Հայաստանի հատուկ թղթակից: Սակայն նրա մասնագիտական կյանքի համար կոչում դարձավ կինոն: Եղել է ոչ միայն տեսական հետազոտող, այլ նաեւ՝ կինոյի զարգացման ակտիվ մասնակից: Եղել է «Հայ կինոյի» հատուկ սցենարա-խմբագրական կոլեգիայի գլխավոր խմբագիրը, 1976-87 թվականներին գլխավորել է Հայաստանի կինոգործիչների միությունը, միաժամանակ եղել է ԽՍՀՄ կինոգործիչների միության վարչության քարտուղարը: Զբաղեցրել է նաեւ այլ կարեւոր պաշտոններ՝ կինոյի ոլորտը կարգավորող պետական մարմիններում: Նրա ժառանգության մեջ հատուկ նշանակություն ունեն Համո Բեկնազարյանին, Հենրիկ Մալյանին, Արման Մանարյանին, Սերգեյ Փարաջանովին նվիրված մենագրությունները: Դրանք միայն կենսագրական ակնարկներ չեն, այլ, ինչպես մասնագետներն են նշում՝ խորը ուսումնասիրություններ այդ վարպետների ժառանգության եւ ստեղծագործական մեթոդիկայի, որով հնարավոր է դառնում հասկանալ հայկական կինոյի պատմական զարգացումն ու նրա զբաղեցրած տեղը համաշխարհային կինոյում: Ի դեպ, նրա ժառանգության հրատարակության հարցում մեծ նշանակություն է ունեցել կնոջ՝ Մարգարիտա Ռուխկյանի ունեցած դերակատարումը: Ռուխկյանի ջանքերով է, որ Քալանթարի կինո-պատմագիտական գլխավոր աշխատությունը հրատարակվել է 2004 թվականին:

ԱՆԿԱԽ ՆՐԱՆԻՑ, ԹԵ ՈՎ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՄԱՆԿԱՊԻՂԾ, ԴԱ ԱՀԱՎՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ Է

ՀԽ

Օրեր առաջ Հանրային խորհրդի նախագահը ներկայացրել է 2025 թ. գործունեության տարեկան հաշվետվությունը: «Հանրային խորհրդի մասին» օրենքի համաձայն՝ ՀԽ նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչեւ փետրվարի 15-ը հաշվետվություն է ներկայացնում կառավարությանը: Այս հաշվետվությունը կառավարության գովքից է բաղկացած՝ նշվել է, որ ՀՀ կառավարությունը ՀԽ-ին հնարավորություն է տվել իրազեկվել պետության ներքին կյանքին եւ արտաքին հարաբերություններին առնչվող տեղեկատվությանը, ՀԽ նախաձեռնած հանդիպումներն անցկացվել են գերատեսչական բարձր մակարդակի մասնակցությամբ, տարբեր ոլորտների քաղաքական պատասխանատուների (նախարարներ, տեղակալներ) եւ օրենսդիրների ընդգրկմամբ: Գրված է, որ 2025թ. հանդիպումներն ընդգրկել են հանրային կյանքի զգայուն եւ հրատապ խնդիրներ, իրականացվել են շրջայցեր ռազմավարական նշանակության օբյեկտներ, եւ նման լոլոներ: Սակայն այս կառույցը ստեղծվել է այն նպատակով, որ քննարկվեն հանրային կարեւորության հարցեր, հանրության ձայնը հասցնեն կառավարությանը, այլ ոչ թե իշխանության մաս դառնան: Զրուցել ենք ռեժիսոր, ՀԽ անդամ **Ռուբեն Բաբայանի** հետ:

- Ի՞նչ հաշվետվություն է կազմել Արա Խզմալյանը:

- Տարբեր թեմաների մասին, որոնց Հանրային խորհուրդն անդրադարձել է: Գնումների մասին, բանակի մասին, իմ ոլորտի հետ կապված եւս՝ գիտության, մշակույթի, սպորտի հետ կապված՝ նախարարի հետ: Օրենքի նախագիծ էլ կա՝ իրական Հայաստանի մասին, որն իդրաֆտ համակարգում է, ինչը վերաբերում է պատերազմի քարոզչությանը եւ այլն: Ունեցանք լուրջ քննարկում շահագրգռված կողմերի հետ, որին մասնակցում էին ոչ միայն խորհրդի անդամները, այլեւ՝ շահագրգիռ այլ անձինք, մշակութային գործիչներ: Ցանկացած ոլորտի մասին քննարկման ժամանակ լինում են հրավիրյալ անձինք:

- Օրինակ՝ բանակի հետ կապված ի՞նչ է գրվել, ի՞նչ քննարկումներ են եղել:

- Բանակի հետ կապված մի քանի հարցեր կային: Օրինակ՝ այսօրվա վիճակի հետ կապված, այցելություններ էին կազմակերպվել պաշտպանական դիրքեր, ինչպես նաեւ՝ խոսվել է զենք ձեռք բերելու մասին, հետագայում նաեւ, երբ Հնդկաստանի պաշտպանության նախարարը ժամանեց Հայաստան, հանրայնացվեց, սակայն մենք երկու ամիս առաջ էինք դա մեր աչքերով տեսել: Պատգամավոր Հայկ Սարգսյանը մի նախագիծ էր ներկայացրել՝ որոշակի գումարի դիմաց բանակից ազատվելու մասին, մենք նաեւ այդ հարցին շատ լուրջ անդրադարձանք: Ես այցելել եմ զորամասեր, կանանց գունդ եւ այլն:

- Օրինակ՝ ԱԺ նախագահը ռուսական ԶԼՄ-ին տված հարցազրույցում հայտարարել է, որ Հայ առաքելական եկեղեցում կան մանկապիղծ հոգեւորականներ: Իշխանությունները տեւական ժամանակ պայքարում էին, որ Եպիսկոպոսաց ժողով տեղի չունենար՝ կաթողիկոսի ելքը Հայաստանից փակեցին: Այս հարցերը չե՞ն հետաքրքրում Հանրային խորհրդին:

- Ես կարծում եմ, որ այդ հարցերը գտնվում են իրավապահների տիրույթում: Խոսքը բավականին ծանր մեղադրանքի մասին է: Անկախ նրանից, թե ով կարող է լինել մանկապիղծ, դա ահավոր մեղադրանք է: Իրավական լուծումներ են հարկավոր: Ինչ վերաբերում է եպիսկոպոսական ժողովներին, այդ հարցերն ինձ շատ քիչ են հետաքրքրում:

- Իրավապահներն ակնհայտորեն միջամտում են Եկեղեցու կյանքին, հոգեւոր կյանքի վերաբերյալ շատերս կարող ենք հետաքրքրություն չունենալ, խնդիրը դա չէ, այլ այն է, որ դատարանները հլու-հնազանդ կատարում են գործադիրի հրամանները: Այստեղ խնդիր չե՞ք տեսնում:

- Դե, մենք ունենք հնարավորություն՝ մեր դատարանների որոշումները բողոքարկելու ավելի բարձր ատյաններում: Կաթողիկոսի հետ կապված որոշումը քննչական է: Եթե Հայաստանի դատարանները խախտումներ են անում, ապա դրա համար կան միջազգային դատարաններ: Կան նախադեպեր, երբ Եվրոպական դատարանում բողոքարկում են, ոչ միայն նոր վճիռ է կայացվում, այլեւ՝ գումարի տեսքով են փոխհատուցում: Դա շատ նորմալ ընթացք է:

- Բայց սրանք առանցքային հարցեր են, եւ մարդիկ մեղադրում են Հանրային խորհրդին՝ պրոիշխանական լինելու մեջ, ստացվում է, որ դուք քննարկում եք բացառապես պրոիշխանական հարցեր:

- Հանրային խորհուրդն ունի տարբեր հանձնաժողովներ: Ինչ ասեմ, ես այնպես չէ, որ գյուղատնտեսությունից մինչեւ գինեկոլոգիա՝ ամեն ինչից հասկանում եմ:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ ԵՎ ՌԵՅ ԲՐԵԴԲԵՐԻ

Ծանո՞թ են եղել արդյոք Վիլյամ Սարոյանն ու հայտնի ամերիկացի գրող Ռեյ Բրեդբերին: Այս հարցի պատասխանը գտնելու համար, Սարոյանի կյանքն ու ժառանգությունն ուսումնասիրած Արամ Օհանյանը բավականին ծավալուն ուսումնասիրություն է ժամանակին իրականացրել՝ արդյունքներն ամփոփելով իր «Երկրորդ կորուսյալ սերունդը» հոդվածում:

Հիշեցնենք, որ Բրեդբերին մեր ժամանակի ամերիկյան գրականության ամենից հայտնի դեմքերից է եղել, անտիուտոպիստ, որ հեղինակել է բազմաթիվ արձակ գրական գործեր: Ուսումնասիրությունները պարզել են բավականին հետաքրքիր մի պատկեր: 1933 թվականի դեկտեմբերին Սարոյանը նամակ է ստանում Story հանդեսի խմբագիր Վիթ Բերնետից եւ նրա կնոջից՝ Մարթա Ֆոլիից, որում հաղորդվում է, որ Սարոյանի պատմվածքներից մեկը տպագրվելու է փետրվարի համարում: 1934 թվականին լույս է տեսնում Սարոյանի ժողովածուն՝ նվիրված Բերնետին ու Ֆոլիին: Արխիվային աշխատանքներ իրականացնելիս Օհանյանը հայտնաբերում է Սարոյանի եւ Ֆոլիի նամակագրությունը: Դրանցից մեկում Մարթա Ֆոլին Սարոյանին հայտնում է մի 29-ամյա հիանալի գրողի՝ Ռեյ Բրեդբերիի մասին, որն իրեն Սարոյանին է հիշեցրել: Հատկապես, որ Ֆոլին ու Սարոյանը ծանոթացել են այն ժամանակ, երբ Սարոյանը ճիշտ այդ տարիքում է եղել: Նա խորհուրդ է տալիս ծանոթանալ Բրեդբերիի հետ: Սարոյանն արձագանքում է Մարթա Ֆոլիի առաջարկին եւ 1951 թվականի հուլիսի 30-ին նամակ է գրում Բրեդբերիին: Նա հորդորում է Բրեդբերիին՝ զանգահարել իր գրասենյակ եւ հանդիպել ճաշի սեղանի շուրջ՝ զրուցելու կարճ պատմվածքների եւ գրականության մասին:

Պատասխանե՞լ է արդյոք Բրեդբերին Սարոյանին, զանգահարե՞լ է արդյոք նրան, ի՞նչ է ասել՝ հանդիպե՞լ են արդյոք, թե՝ ոչ, հայտնի չէ: Արխիվային թղթապանակում, որտեղ Սարոյանի նամակներն են, այդ մասին որեւէ վկայություն չկա: «Այդ մասին կարելի էր մոռանալ, եթե մի հանգամանք չլիներ: Նախքան այդ նամակները՝ ինձ մոտ հայտնվելը, ես ունեի հիմք՝ կարծելու, որ Բրեդբերին ծանոթ է եղել եթե ոչ Սարոյանի հետ, ապա առնվազն՝ նրա ստեղծագործությունների: Այդ մտքին ես հանգել եմ, երբ համեմատել եմ այդ հեղինակների գործերը, որոնք թույլ են տալիս նրանց միջեւ մի շարք զուգահեռներ անցկացնել»,- գրում է Արամ Օհանյանը: Հոդվածագիրը նշում է, որ նա որոշել է նամակ ուղարկել Լոս Անջելեսում բնակվող Բրեդբերիին եւ հարցնել, թե արդյոք Սարոյանի հետ հանդիպում, զրույց կամ հեռախոսազրույց եղե՞լ է: Եվ ահա՝ Բրեդբերին պատասխանել է, որ կապ հաստատել է Վիլյամ Սարոյանի հետ, հանդիպել է՝ իր հետ բերել Սարոյանի բոլոր գրքերը, որոնք ունեցել է այդ պահին, եւ խնդրել է, որ հայ մեծանուն գրողը դրանք ստորագրի իր համար: Նաեւ գրել է, որ Վիլյամ Սարոյանի գործերի ընթերցողն է եղել ոչ պակաս, քան քսան տարի: Բրեդբերին ափսոսանք է հայտնել, որ ամուր բարեկամություն չի ձեւավորվել Սարոյանի հետ: Պարզապես նրանք հիացել են մեկմեկու գրականությամբ:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

«ՍՈՒՊԵՐՎԱՐՉԱՊԵՏՈՒԹՅԱՆ» ՄԵՏԱՍՏԱԶՆԵՐԸ, ԿԱՄ՝ ՈՎ Է ԼԻՆԵԼՈՒ ՀԱՋՈՐԴԸ

Ողջ հանրային-քաղաքական դաշտը եւ ԶԼՄ-ները կենտրոնացել են մեկ հարցի շուրջ՝ գալիք համապետական ընտրությունների արդյունքում ով է լինելու Հայաստանի հաջորդ վարչապետը: Ոչ թե իշխանությունը, կառավարությունը, Ազգային ժողովը, նախագահը, այլ՝ վարչապետը: Սա խոսում է քաղաքական համակարգի «հիվանդության», ոչ հասուն կամ ուղղորդված քաղաքացիական հասարակության եւ մեծավմասամբ ապատեղեկացված ընտրողի թյուր պատկերացումների մասին:

ՀՀ Սահմանադրության 146 հոդվածի 1-ին կետի համաձայն՝ «Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է», ուշադրություն դարձրեք՝ ոչ թե վարչապետը, այլ՝ կառավարությունը: Իսկ 147-րդ հոդվածի 1-ին կետում ասվում է. «Կառավարությունը կազմված է վարչապետից, փոխվարչապետներից եւ նախարարներից»: Բայց հանրային հիշողությունը ենթագիտակցորեն առաջնորդվում է «Կառավարությունը ես եմ» փաշինյանական մոդելով: Ավելի վաղ՝ «թավշյա ապոկալիպսիսի» մեկնարկի ժամանակ, նույն անձը բղավում էր. «Կամ ես կլինեմ Հայաստանի վարչապետը, կա՛մ Հայաստանը վարչապետ չի ունենա»: Այո՛, ամբոխավարության մթնոլորտում նման էմոցիոնալ պոռթկումները թռցնում էին տաք կարկանդակների պես, ավելին՝ կուլ տալիս եւ մարսում շատ արագ:

Մեր չարչրկված Սահմանադրության 88-րդ հոդվածի 1-ին կետով՝ «Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է, որը տնօրինում է օրենսդիր իշխանությունը եւ վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ, ընդունում է պետական բյուջեն» եւ այլն: Այսինքն՝ ժողովրդի ներկայացուցիչը ոչ թե վարչապետն է, այլ՝ Ազգային ժողովը, որպես հավաքական մարմին, որն ունի հստակ վերահսկողական գործառույթներ եւ կառավարության, եւ վարչապետի, այսինքն՝ «ինքնահռչակ կառավարության» նկատմամբ: Ըստ Սահմանադրության՝ վարչապետը կառավարության մաս է, նա ո՛չ գլուխ է, ո՛չ էլ «մեր երկրի ղեկավարը», ինչպես նրան բնութագրեց ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը՝ Դավոսում Իլհամ Ալիեւին շնորհակալություն հայտնելու ժամանակ: Իրականում հենց ի՛նքն է «պետության գլուխը» (ՀՀ Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին կետ՝ «Հանրապետության նախագահը պետության գլուխն է»), եւ իր հիմնական գործառույթներից է՝ «հետեւել սահմանադրության պահպանմանը» (հոդված 123, կետ 2):

Որքան էլ որ գործող վարչապետն իրեն փորձում է վերագրել օրենսդիրի, գործադիրի, դատականի եւ անգամ Վեհափառ հայրապետի հոգեւոր լիազորությունները (չհաշված պատմական կերպարների հետ զուգահեռներ տանելը՝ Պապ թագավորից մինչեւ Տրդատ Երրորդ), սահմանադրաիրավական դիտանկյունից նա ընդամենը կառավարության մենեջերն է եւ ուրիշ ոչինչ: Այսինքն՝ երբ նա թավշյա էյֆորիայի մեջ հայտարարում էր՝ «դուք՝ բոլորդ վարչապետ եք», հավանաբար, մտքում իրեն վերապահում էր «վարչապետների վարչապետ» տիտղոսը: Ըստ այդմ, մենք պետք է մեր հանրությանը վերադարձնենք քաղաքական իրատեսության դաշտ, որպեսզի մեր ժողովուրդը գիտակցի, որ պետությունը պտտվում է ոչ թե անհատի, այլ օրենքի գերակայության առանցքի շուրջ:

«Սուպերվարչապետության» ոչ լեգալ ինստիտուտը, որն իր մեջ փաստացի եւ բռնի կերպով ներառում է իշխանության բոլոր թեւերն ու ճյուղերը, հիմնված է կուսակցական-չինովնիկական համակարգի վրա: Վերջինս գործում է վերադասի նկատմամբ անվերապահ հավատարմության եւ, որոշ դեպքերում, կույր ստրկամտության սկզբունքով: Կազմաքանդված պետական եւ համայնքային ինստիտուտների բարձրաստիճան պաշտոնյաների մի ստվար զանգված գործում է «ասեք՝ կանենք» կամ «պարգեւավճար տվեք՝ կդավանափոխվենք» նյութահաստատված ավտորիտար վարչակարգի մասին: Ավելին, այս գործընթացը սահուն կերպով շարժվում է դեպի տոտալիտարիզմ, որը բնորոշ էր հիտլերյան Գերմանիային եւ ստալինյան Ռուսաստանին: Իշխանության նման հակումները լավագույնս արտահայտվում են Հայ առաքելական եկեղեցու դեմ մղված հիբրիդային պատերազմում, որի վերջին շտրիխը կաթողիկոս Գարեգին Բ-ի նկատմամբ քրեական գործի հարուցումն էր:

Հետեւաբար, գալիք համապետական ընտրություններին մենք պետք է ընտրենք ոչ թե անհատի, այլ՝ քաղաքական այնպիսի թիմի, որն ի զորու է ստանձնելու հավաքական պատասխանատվություն մեր պետության, Եկեղեցու եւ ազգի առջեւ:

Արեգ ՍԱՎԳՈՒԼՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ



Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 21.02.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԱՐԳԱՐԵԱԿԱՆ ԵՐԱԶՆԵՐԸ



Խառնիճաղանճ երազներ էր տեսնում վարչապետը. մեկ իրեն տեսնում էր Մոսկվայում: ԱՊՀ ղեկավարներն օղակ են կազմել, թեժ հարցեր են քննարկում: Առանց իրեն: Տեսեք սրանց լկտիությունը: Փորձում է ճեղքել օղակը: Օղակը սեղմվում է: Ամոթալի է: Ինչպե՞ս հաղթահարի այդ ամոթը՝ սեփական ժողովրդից ու Եկեղեցուց վրեժ լուծելով:

Լրագրողները շրջապատել են՝ հարցերի տարափ է: Յուրաքանչյուր հարց՝ ինքնասպանության հասցնող: Բայց իրեն հնարավոր չէ հունից հանել՝ ինքն անխոցելի է: Իմունիտետ ունի՝ իրականությունից, տրամաբանությունից, պատասխանատվությունից դուրս է... Հարցազրույց տալն էլ մեկ նպատակ ունի՝ ապացուցել, որ դեռ վարչապետ է:

Իսկ երեկվանից երազներն ուղղակի մարգարեական երանգ ստացան: Վերջապես տեսավ ապագան. Կառավարական ամառանոց: Քնած է: Խառնիխուռն պատկերներ: Ճոխ սեղան: Սեղանի գլխին ինքն է: Շուրջը՝ ուսապարկային հին գվարդիան: Խաշ են ուտում, խորոված վայելում եւ պետականության վերջին մնացորդները ծամում: Ներս են մտնում «լրաբերները»: Ձեկույցը հուսադրող է՝ աղանդավորները խմբերով մասնակցում են ընտրություններին: Իշխանավորները, նրանց ընտանիքները, նիկոլապաշտ ֆանատները տեղում են: Կաշառքն ու կեղծ անձնագրերը գործում են: Հանձնաժողովականներն իրենց տեղում են: Եվ հանկարծ վատ լուր՝ ժողովուրդը գնում է ընտրության: Անհավանական մեծ քանակով: Սա արդեն վտանգավոր է: Ժողովրդի քիչ լինելը հույս է ներշնչում, շատ լինելը՝ անհուսություն:

Հաջորդ պատկերը. ամպրոպ է, պատուհանների փեղկերն իրարահան են լինում: Հեղեղը խուժում է ներս: Սեղանակիցներն անհետանում են՝ ինչպես խոստումները: Մնում է մենակ: Դուրս է նայում: Ոչ ոք: Ո՛չ Աննան կա, ո՛չ թիկնազորը, ո՛չ ՔՊ-ն: Հասկանում է: Չեն ընտրել: Խուճապ: Թաքնվել: Թախտի տա՞կ՝ վտանգավոր է: Կգտնեն: Փողոցից ագրեսիվ ձայներ են գալիս.Ո՞ւր է...

Հեծանիվ: Իզուր չէր մարզվել: Չուլան, ծաղրածուի հագուստ: Ուղղությունը՝ «եղբայրական երկրներ»: Էրդողանի պալատի առաջ է: Քրտինքը ծորում է, հյուծվել է, նվաստացած է.- Ասեք մեծ եղբորս, Էրմենիստանի վարչապետն է ... Պատասխան. գնա Ադրբեջան: Ինչո՞վ գնամ: Ինչո՞վ եկար: Դարձյալ հեծանիվ: Բաքու: Շեհիդների պուրակ: Ալիեւը ցուցադրում է ավարը: Լուկաշենկոն հրճվում է: Տեսնում են նրան: Ալիեւի հայացքում՝ արհամարհանք: Լուկաշենկոյի աչքերում՝ հաճույք:

- Սա մեր պատմության մեջ ամենաօգտակար հայն է,- ասում է Ալիեւը,- հերոսի կոչում էինք որոշել տալ, բայց գործը կիսատ թողեց. Եկեղեցին՝ կա, Հայաստանը՝ շնչում է: Ո՞նց վարվենք:

Լուկաշենկոն փսփսում է ականջին, Ալիեւը հրամայում է՝ տարեք:

Երազում գոռաց, արթնացավ: Սենյակում քայլեց: Հասկացավ՝ երազ էր: Նորից քնեց: Այս անգամ՝ ժողովուրդ, հոծ բազմություն: Այս անգամ իր ետեւից չեն գնում, իր ետեւից են եկել: Հայիոյանքներ, անեծք: Քաշքշոց...

Եվ հանկարծ մի ձայն.-Թողեք: Օրենքով կպատասխանի...Արթնացավ: Սրտիկ արեց: Վախը, սակայն, սրտիկից չանցավ: Ողջ օրը կրկնեց.

- Առջեւը՝ ջուր, հետեւը՝ սուր...

Երեկոյան պառկեց՝ մարգարեական վերջին երազը տեսնելու...

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am